

373

F-49

ԴՆԻ ԽԵՐԿԱԳՐՈՒՄ

1.1

4271

ՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ


ՏԵՍՈՒՉ ԱՐՑԱՄԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՅԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1900/1901 ուսումն. տարուայ

Կարդացուած 1901 թ. Յունիսի 10-ին տարեկան

հանդիսի ժամանակ:




Թ Ի Յ Լ Ի Ս

Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի
Միքայէլեան փողոց, տուն 81.

1901

573
P-99



- MAR 2010

370
1874-ԲԵ

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏԵՄՈՒՉ ԱՐՅԱՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈՐԵՆՆԵՐ ԿՈՐԵՆՆԵՐ

373
Բ-49




Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1900/1901 ուսումն. տարուայ

Կարդացուած 1901 թ. Յունիսի 10-ին տարեկան

հանդիսի ժամանակ:



Թ Ի Յ Լ Ի Ս
Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի
Միջայլեւան փողոց, տուն 81.
1901

4271
5171

7 - MAR 2010

075

87-178

СЕРИЯ ПЕРВАЯ

СЕРИЯ ПЕРВАЯ
№ 178
1901

2 2 2 2 2 2 2 2

1901 1901 1901 1901 1901 1901 1901 1901

Дозволено цензурою. Тифлисъ, 8 Августа 1901 года.

1901 1901 1901 1901 1901 1901 1901 1901

Тифлисъ, 8 Августа 1901 года.

1901
Тифлисъ, 8 Августа 1901 года.

Գերապատիւ Սրբազան Տէր, Պատուարժան պ.
Հոգաբարձուք և Մեծարգոյ հանդիսականներ:

Գեանքիս լաւագոյն օրերից մէկն է այսօր, զի ես միայն
բարոյական պարտուց ճնշումով կանգնած եմ այստեղ մերձաւոր
իշխանութեանս, Հայոց ժողովրդի, խղճիս և Աստուծոյ առջև,
իրրև հաշուետու տնտես այն հաստատութեան, զոր վստահու-
թեամբ հաւատացին ինձ պ. պ. հոգաբարձուք, Սրբազան Առաջ-
նորդը և Ազգիս Սրբազնագոյն Հայրապետը:

Ամէն շէն տուն հաշուետետութեամբ է հաստատուն մնում,
առաւել ևս մի ազգային վարժարան: Փաստալից հաշիւը փարա-
տում է տարակուսանքները դէպի հաստատութիւնը, լռելիայն
բողոքում է սխալ տեղեկութեանց և անարդար լուրերու դէմ,
զուգակշիռ է դնում աշխատանքի և աննպաստ կամ նպաստաւոր
հանգամանքների մէջ և այսպիսով զօրացնում է բարեխիղճ հա-
շուետեսի հաւատը դէպի հաստատութիւնը, հարազատութեան
մի փոխադարձ զգացմունք է յուզում երկուստեք, հնարաւորու-
թիւն է տալիս կարիքները տեսնելու և դարման անելու:

Արդ, նախքան սկսիլը թոյլ տուէք Ձեր ամենուզ երկայն-
մտութիւնը խնդրեմ, զի փոքր ինչ պիտի երկարի խօսքս, ապա
թոյլ տուէք որ պարտուց և իրաւանց արդար սկզբունքով իմ
պարտքերուս հաշիւը տալով հանդերձ և ձեր պարտքերու հաշուե-
տեսը լինիմ մէջ ընդ մէջ:

Տարիմ յաւաջ մի այլ Հոգևոր Դպրանոցում տեսուչ էի, ոչ
«Նշանակովի» այլ տեղւոյն հոգաբարձութեան և սրբազան առաջ-
նորդի միաձայն զբոլթեամբ ընտրովի տեսուչ. անհամեստութիւն
կլինի և անտեղի իսկ իմ ջանքերիս մասին խօսել, բայց ստի-

պուեցայ մի խաղաղ Գպրանոց, համերաշխ վարչութիւն թողնել ու գրաւոր հրաժարական ղնել նորին Ս. Օծութեան առաջ-վեհ. Հայրապետն երկիցս հրամայեց նուաստիս գէթ Ջուշի տեղափոխուել նոյն պաշտօնով, բայց ես թախանձեցի որ զիս մի տարի անպաշտօն թողնէ գրականութեամբ պարապելու և թոյլտուութիւն խնդրելով ամբարանոց գնացի սպառուած ոյժերս վերակազմելու: Ընկապարհին միշտ կրկնում էի. «Տէր, զի է զի ճանապարհք ամբարչտաց յաջողեալ են» և իմ հոգուս մէջ յոռետեսութեան մի սև կաթիլ էր ընկել, ես կարծես զաղաքել էի արդարութեանը հաւատալուց: Երկու ամիս անց զանազան տեղերից ցանկութիւններ եմ կարդում պաշտօններ ստանձնելու իրենց մէջ: Ստանում եմ և Ջուշոյ Մեծարոյ հոգաբարձութիւնից հեռագրեր զպրանոցի տեսչութիւնն յանձն առնելու. այս ձայները, այս հրաւերը ժողովրդի ձայն էր, որի հայրենի սրբազան տան ու տաճարի սպասաւորն եմ. վերստին նորա սէրը խօսեց կրծքիս մէջ, չքացաւ լքումն ու յոռետեսութիւն, հաւատացի թէ արծաթապատ մեծ փարիսեցու ձեռքով սպանուած արդարութիւնը, ժողովրդի ձայնով յարութիւն է առել և հեռագրեցի «պատրաստ եմ ծառայելու սրբազան գործին»: Կրկնակի հեռագրերն ինձ շտապեցնում էին ու ես աճապարանօք Օգոստոսի վերջին այստեղ հասայ: Ընկապարհին բանիրուն բարեկամ մարդիկ համոզում էին ինձ հրաժարուել Ջուշուց, ուր նոցա ասելով, տասնեակ տարիներ ի կուսակցութիւնն ու ատելութիւնը լեռնաման ալիքներ է բարձրացնում. ես սկսում էի վարանել. բայց միշտ երևակայութեանս առաջն էր գալիս նինուէի ծառայութիւնից փախչող Յովնան մարգարէն, որին հալածում էր Աստուած ժողովրդից խոյս տալու համար: Ժողովրդի ատելութեան ալիքը նորան անդունդներն իջեցրեց, բայց Յովնանի սիրտը կարգացող Աստուածը նորան անդունդներից վերստին սիրոյ ցամաք հանեց: Նոյն Աստուած, նոյն Յովնան սիրտ էին տալիս ինձ որ միայն և միայն Ջուշին ընտրեմ:

Հասել եմ. սեպտեմբերն է արդէն, ուսումնական տարին սկսում է. Սրբազան առաջնորդը նոր է հաստատուել ու նորա հաւանութիւնը չկայ. վերջապէս նորին Սրբազնութիւ-

նը հեռագրական հրամանով պատուիրում է ինձ գործն սկսել: Սկսել մի այդպիսի վսեմ ու ծանր գործ և միայնակ, սոսկալի է. դպրանոց կայ բայց ոչ մի ուսուցիչ, զի եղածներն արձակուած են պաշտօնից, աշակերտներն առանց հսկողութեան անկարգացած: Ուսուցչացուներն ամէնք արդէն իրենց տեղերում. սակայն պէտք էր խումբ կազմել և ես ուսուցիչներ հրաւիրելու ետեւէ եղայ, նախապէս Մեծ. հոգաբարձուաց հետ խորհրդակցելով:

Ուսուցչական խումբ կազմելիս հետեւեալ որոշ սկզբունքով եմ առաջնորդուել. Հայոց Հոգևոր Գլխանոցում հայկական զիտութեանց համար միակ յարմար ուսուցչացուներն են նոքա, որոնք այդ ծրագրով են ուսել և հէնց դպրանոցներում ուսուցիչ լինելու համար են պատրաստուած. այդպիսիները միայն ճեմարանականներն են. աշխարհի և ոչ մի անկիւնում Գլխանոցներում աւանդուող առարկաներ չեն ուսանում բացի ճեմարանում: Ապա ուրեմն ճեմարանականներին, ի հարկէ ընտրութիւն անելով, այդ առարկաներ յանձնելը, շատ բնական և անխուսափելի է: Բայց ցաւել պէտք է այն ամենասէր բայց ոչ հայասէր ազգայիններու վերայ, որոնք ինքնասպանութեան տենչով բռնուած դէպի Հայոց Հոգևոր ճեմարանը հարագատի սէր չեն տածում. դոցա համար աւելի լաւ է օտարասնունդ կօշկակարին տալ Հայոց մատենագրութեան դասերը քան հայացի ճեմարանականին: Ցաւել պէտք է և այն ճեմարանականների վերայ, որոնք իրենց անարժանութեամբ երբ և իցէ իրենց հոգևոր ծնողին և նորա արժանաւոր սաներին արատ են բերել:

Ռուսաց լեզուի համար մեր համոզմունքով վարի բաժանմունքներում պիտի աւանդէ ուսուցչական սեմինարիա կամ ինստիտուտ աւարտած մէկը, միջին դասարանների համար ինստիտուտ աւարտած, որոնք հէնց դորա համար էլ պատրաստուած են. իսկ վերին դասարանների համար համալսարանական կրթութեամբ լեզուագէտ, մաթեմատիկայի և ընադիտութեան համար նոյնպէս բարձրագոյն կրթութեամբ մարդիկ: Ոչ մի դպրանոցանաւարտ չպէտք է ուսում աւանդէ Գլխանոցում: Այս սկզբունքն էլ հաւանել են մեծարոյ հոգաբարձուները, բայց միաձայն խնդրել էին հրաւիրել պ. Գարբիէլ Ղուլիբէխեանին, որը դպրանոցական

լինելով հանդերձ իւր բազմամեայ փորձառութեամբ ուսուցչական հմտութիւն է ձեռք բերած. թէև անծանօթ, բայց յօժարեցայ այդ բացառութիւնն անել:

Ահա այն սկզբունքները որոնցով ջանացի այդ ձախորդ հանգամանքներում ուսուցչական խումբ կազմել. հրաւիրեցի Դըպրանոցիս նախկին ուսուցիչներէից օմանց և հինգ նոր ուսուցիչ, որոնցից երեքը ինձ հետ ծառայել էին դպրանոցական ասպարիզում, իսկ երկուքը նորաւարտ ճեմարանականներ: Ուսուցչական կազմը հետեւեալ ձևով կերպարանուեցաւ.

| Անունն ուսուցչաց | Ուր էն ուսել | Ինչ էն ասանքս | Ո՞ր տէր | Քանի քաշի քան | Տարեկան սո՞վի |
|-------------------------|---------------------------------|--|---|----------------------------------|-------------------|
| 1 Պ. Ս. Գիւլղաղեան | Գ. Պօլլիս | Հայոց լեզու | Գ. Ե. Զ. | 10 | 340 |
| 2 Պ. Արշ. Տ. Միքէլեան | Հոգև. ճեմ. և Ենայի համալ. դօկտ. | Ուսում. ս. Գր. Քրիստ. վարդ. Տօմարազիս. Հայ. մտտեն. Եկեղ. պատմ. | Գ. Գ. Ե. Զ. Ե. Զ. Ե. Զ. Գ. Ե. | 9 3 2 6 6 | |
| 3 Պ. Արշ. Զիլինկարեան | Հոգ. ճեմ. դպ. եղել է Գերմ. | Գերմաներէն Բուսարան. Բնալուծութ. Մարդակազ. Կենդանար. Ընդհ. պատմ. Գծագրութ. | Գ. Գ. Ե. Զ. Գ Գ Գ. Ահ. Աղ. Ե. Զ. Ահ. պ. | 10 2 2 2 4 4 2 | 1200 |
| 4 Պ. Աղ. Թարխանեան | Հոգ. ճեմ. | Հայոց պատմ. Հայաստ. աշխ. Հայոց լեզու | ՉԱ. Բ. Գ. Ե. Զ. Բ. Գ. Բ. Գ. | 13 4 9 | 26 1200 |
| 5 Պ. Կարապ. Թիւնիբէկեան | Ռէալ. դպրոց. Ուսուցչ. ինստ. | Գրագարանայեա Ռուսաց լեզու | Նապետ 2Գպ. 2Ատ.Բ. | 29 | 780 100 870 |
| 6 Պ. Քրիստափոր Փիլիքեան | Ռուսաց. սեմինար. | Ռուսաց լեզու Ռս. Լ. դեղագ. | 2Ապ. 3Բպ. Գհ. պ. | 24 1 | 25 750 |
| 7 Պ. Գրք. Դուլբիսեան | Թեմական դպ. | Թուարանութ. | 2Ա.պ. 2Բ.պ. | 20 12 | 600 360 |
| 8 Պ. Արշ. Տ. Ոսկանեան | Հոգև. ճեմ. | Հայոց լեզու Վարում է վերականգնուի պաշտօն. | 2Ատ. | 400 | 760 |

| Անուանք ուսուցչոց | Ուր էն ուսելը | Ինչ էն աւանդումը | Ո՞րտեղ | Քար. քանի րոպե | Տարեկան սոճիկ |
|---|---|--|--|------------------------------|-------------------|
| 9 Պ. Յար. Պօպովիան | Լեոն. ճեմ. դ. կուրս. և Պետ. մոն. երթչ. ուս. | Երդեցողութ. շայնազբութ. նկարչութիւն | 2Ապ. 3Բպ. 2Գպ. 2Ատ. Բ. Գ. Ազգ. | 14 11 1 26 | 800 |
| 10 Արթ. Գ. ք. Վարդապետեան 11 Պ. Պատուական Բուշմանեան | Թեմակ. դպր. Հոգևոր ճեմ. | Կրօնագիտ. Կրօնագիտ. Հայոց լեզու Գեղազագր. նկարչութ. | 3Բպ. 2Գպ. 2 Ապ. ԱՏպ. ԱՏպ. ԱՏպ. | 15 4 6 2 1 | 450 |
| 12 Պ. Հայկ Յովհաննիսեան | Հոգևոր ճեմ. | Վար. էր աւագ լինող. սլաւոն. Ընդհ. պատ. Ընդ. տշխարհ. Հայոց լեզու Գծագրութ. ճեսութ. մատ. | Վերակց. պաշտօն Գ. Գ. 2Ադ. Բ. Գ. Բ. Տ. պ. ԳՏպ. Գ. | 13 4 12 6 2 2 | 390 400 790 |
| 13 Պ. Համբարձում Աբովեան | Հոգևոր ճեմ. | Սրբապ. պատ. Կարգ Ատած. Գեղազրութ. Գծագրութ. | 2Ադ. Բ. Բ. Ազպ. Գզպ. | 26 8 1 1 4 | 780 |
| 14 Պ. Հայկ Յովակիմեան | Հոգևոր ճեմ. | Վար. էր վեր ահացուի պաշտօն Հայոց լեզու Գեղազրութ. | Ազպ. 2Գպ. ԱՏգ. | 14 18 1 | 420 400 820 |
| 15 Պ. Մկրտիչ Տ. Սահակեան | Հոգևոր ճեմ. | Վար. էր վեր ահացուի պաշտօն Գեղազրութ. Գծագրութիւն | Ազպ. 2Գպ. 3Բպ. 3Բպ. | 19 200 15 6 | 570 200 770 |
| 16 Պ. Լեոն Աղախանեան | Հոգևոր ճեմ. | Բարտուղ. ման կավարժ. ժողովի Հայոց լեզու Թուարանութ. Գծագրութիւն | 2Բզպ. ԳՏպ. ԳՏպ. | 21 100 12 4 2 | 630 100 730 |
| | | | | 18 | 540 |

| Անուան հասցեաց | Ուր էն ունէլ | Խոչ էն աւան- բան | Ո՞ր քաղ | Չար. քա- նի դաս | Տարեկան ուճիկ. |
|---------------------------|---|--|--|--------------------|-------------------|
| 17 | | Թուարանութ. Հանրահաշիւ Երկրաչափ. Բնադիտութ. | Գղղ. Չաղ. Բ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Ե. Չ. | 15 4 3 4 | |
| 18 | | Ռուսաց լեզ. Ռուս. պատս. Ռուսաս. աշխ. | Գ. Գ. Ե. Չ. Բ. Ե. Չ. Բ. Գ. | 26 16 6 3 | 1200 |
| 19 Տ. Բենիկ վարդա- պետ | Սան հոգ. ճեմ. Ազատ ունկն. Նովօրոս. Կայ- սերկ. համալ. բացատրիկ վկ. | Հոգեբանութ. Տրամաբան. Տեսչութիւն և | Չ. Չ. | 25 2 2 | 1200 |
| | | | | | 4 1500 |

Մեր նախատեսութեամբ և մեծ. հոգաբարձութեան հա-
մաձայնութեամբ բոլոր դասերի թիւը եօթնհազում պիտի լինէր
381, դասատու ուսուցիչների թիւը տեսչով հանդերձ 19. բոլոր
ծախքը ուսումնական մասի մի ուսումնական տարուայ ընթաց-
քում 16180:

Դասերի բաշխումը կատարելիս ի նկատի եմ ունեցել հե-
տեեալ սկզբունքը, ըստ կարելոյն իւրաքանչիւր ուսուցչի դասե-
րի թիւն իջեցնել երեսունից և միևնոյն ժամանակ բաւարար
ուճիկ տալ: Ես չեմ հաւատում թէ մի ուսուցիչ՝ ով և ինչ կըր-
թութեամբ կուզէ լինի, կարողանայ շարաթական 30 դաս տալ
այն էլ մի քանի առարկաներից և բարեխիղճ կոչուիլ. եթէ կան
այդպիսիները՝ դոքա բացառութիւններ են: Քայց այս խղճուկ
զպրանոցում կարելի էլ չէր 30-ից պակաս տալ, որովհետև 20 և
25-ական ըուրիանոց դասագներ կային, մի վարձատրութիւն
հայ վարժապետի, որից աւելին ստանում է հայ հարուստի խո-
հարարի օգնականը. այս հանգամանքը նախատինք է հայ ան-
ուան. Ուսուցիչն էլ մարդ է և շատ աւելի բարձր մարդ քան
իւր շրջապատը, ուսուցիչն էլ ընտանիք ունի, որոնց պահապա-
նելն ամենաքաղցր պարտքն է նորա: Գլխանոցի մտաւոր և բա-
րոյական յառաջադիմութեան նպաստելու մի կարելոր հանգա-

մանք էր ինձ համար բաւարար ռոճկով քիչ դասեր ապ, որով հետզհետէ կարելի կլինէր լաւ ոյժեր հրապուրել ղէպի մեր զըպրանոցը: Այս խնդիրն արժարժելով հոգարարձական նիստերից մէկում, ստացայ մեր մեծարոյ հոգարարձութեան հաւանութիւնը, որով 20-ական և 25-ական դասագները վերացում էր զըպրանոցից միայն երկու դասագին թողնելով 30 և 46. նոյն բարեփոխութեան սկիզբը Երևանի ղպ. դարձեալ ես եմ ղրել. այդ ճանապարհով պէտք է յառաջ գնալ, մինչև որ ուսուցիչները 18 — 24 դաս ստանան բաւարար ռոճկով և ոչ աւելի: Անարդարութիւն է դեռ, որ մեր հոգևոր ճեմարանի սաներն ստանում են 30-ական դասագնով, իսկ համալսարանականներն ու Լազարեան ճեմարանի սաներն 46-ական կամ աւելի. որովհետև ճեմարանականը նոյնպիսի մի մասնագէտ է հայկական գիտութիւնների համար, որպիսին է համալսարանականը ուսաց լեզուի և մատիմատիկայի համար. առաջնի աւանդելիքները մեր ղպրանոցներում դեռ շատ աւելի բարդ են և աշխատանք պահանջող քան վերջիններինը: Այս հանգամանքը միայն անարդարութիւն չէ, այլ և վիրաւորանք մեր հարազատ հոգևոր գիտութիւններին. հասկանալ պէտք է միայն:

Ի ղէպ. դասերի բաշխման սկզբունքը, դասագների յաւելումն մի քանի մութ մարդկանց մութ սրտերում տրտունջ յաբոյց. մարդիկ, որոնք երկդասեան ղպրոցից վեր չեն ելեր կամ միայն արհեստաւորից ու փերեզակից վկայական ունին, սկսան մանկավարժական, փիլիսոփայական, աստուածաբանական տեսակէտներով քննել ու գտնել որ դասագինն աւելացնելով ղըպրանոցին վնաս տուաւ, որ ուսուցիչների թիւն աւելացնելով «անկեալներ բերեց ղպրանոց: Այդ մի քանի պարոնները եթէ բարոյական այլասեռման հովերին հանդիպած չլինէին պիտի լաւ հասկանային որ եթէ իրենց ղէմքը աղօթելիս (եթէ միայն աղօթել գիտեն) ղէպի հարաւ դեռ չի գառնում, եթէ դեռ Մահմատ չէ իրենց անունը այլ Լեոն ու Թորոս, պարտական են հայ վարժարաններում դաստիարակուած և հայ ղպրոցներում իրբև ուսուցիչ լուռ մունջ մաշուող այդ «անկեալներին». նոքա ամբոխին չեն խառնուում, որովհետև ամբոխ չեն, այլ ամբոխի սիրովն են

վառուում: Գպրանոցի դատախազների մանկավարժական հմտութեան շափը ցոյց տալու համար դատապարտութեան մի օրինակ ևս բերեմ. Հայոց վայելչագրութեան 20 դասի և Հայոց լեզուի 20 դասի համար հրաւիրուած են երկու նորաւարտ ճեմարանականներ. պարոնի մէկը տրանջելով պահանջում է որ այդ երկուսի տեղը կարելի էր մի համալսարանական բերել: Մեր դատաւորը չի հասկանում, որ շաքաթական 40 դաս մի ուսուցչի տալն անկարելի է և երկրորդ համալսարանականը Հայոց լեզուի և գեղագրութեան համար նոյնքան անտեղի է, որքան իւր կարծիքը մանկավարժական խնդիրներում:

Անցնում եմ շարունակութեանը: Գասագները բարձրացնելով հանդերձ, ես անկարող եղայ իմ դրած սկզբունքն այս տարի իրագործել, որովհետև երկու ուսուցիչ՝ Ռուսաց լեզուի և մաթեմատիկայի չկարողացանք գտնել. այս անյաջողութեան պատճառը բազմազան է և պարզ. թեթեակի բացատրեմ այդ պատճառը. մեր գպրանոցներում օտարադաւան ուսուցիչներ հրաւիրելու իրաւունք չունինք, կմնայ որ հայ համալսարանական երիտասարդներին դիմենք. բայց հայ համալսարանականը մեծ մասով հարստի որդին է, իսկ հայ մեծախօս և խստապահանջ մարդը իւր որդուն մաթեմատիկական և ֆիլոլօգիական կաճառները չի զրկում, այլ իրաւաբանական որ իւր գործերը պաշտպանի, ճարտարապետական և մեքենագիտական՝ որ շատ զբամ վաստակի, բժշկական որ հայկական կեանքին օտար անվերջ ախտերը բուժելով շատ աշխատի և օժիտաւոր աղջիկ առնի. այսպէս ուրեմն կարողաւոր հայը իւր ոչ մի գաւակին աղգային եկեղեցական գործունէութեան ասպարիզի՝ այն է քահանայութեան, վարդապետութեան, ուսուցչութեան համար չի պատրաստում: Այդ ասպարիզի վերայ կանգնել են ուզում շքաւոր դատի գաւակները, բայց հարուստը դոցա համար էլ օգնութեան փող չունի, որ բարձրագոյն կրթութիւն ստանան և հայ վարժարաններին պիտանի լինին: Ահա այս պատճառով է, որ Հայոց արդի կեանքի մէջ մաթեմատիկոսներին, բնագէտներին, ֆիլոլօգներին ճրագով ենք որոնում ու չենք գտնում. նոյն կարօտութիւնն ևս զգում Մայր ճեմարանը, Նախիջևանի և Երևանի գպրանոցները, որոն-

ցում վարձատրութիւնը շատ աւելի է քան այստեղ: Միջին կամ ստորին դասակարգից ելած սակաւաթիւ երիտասարդներ եղան, որոնք իրենց ձիրքերի ոյժով բարձրագոյն կրթութիւն ձեռք բերին և իբրև բանգէտ, մաթեմատիկոս, լեզուագէտ մեր դպրանոցները մտան ծառայելու. բայց դոքա էլ հետզհետէ ասպարէզը թողին ու թողնում են. խօսքս Չուչու համար մասնաւորելով կասեմ վախշում են: Եւ ինչո՞ւ. նախ որ Չուչին դաւառական փոքր քաղաք է և շունի մեծ քաղաքների կեանքի յարմարութիւնները, որին ձգտում են ամէնքը. երկրորդ Սիւնեաց աշխարհի այդ սըլլտում մեր ցաւոց օրերում եռ են գալիս կուսակցական՝ և ցեղական ատելութեան ձևերով անձնական զծուծ հաշիւները, որոնք շատ անգամ պայթում են հաստատութեանց գլխին. ստոր ճանապարհներով կռուեցնել առաջնորդներին և տեսուչներին, շփոթել հոգաբարձուաց, տեսչի և առաջնորդի յարաբերութիւնները, ուսուցիչ և աշակերտ որսալ երկուստեք և խռովութեան գործիք դարձնել նոցա իրենց նախանձի թոյնը թափելու որոշ մարդոց վերայ կամ մի անձնական հաշուի համար, առանց հաստատութեան վտանգն ի նկատի առնելու, ապերախտութեամբ ապտակել անձնանուէր աշխատողներին, անպիտանների շեղած առաքինութիւնները հռչակել ևայլն—ահա թէ ինչ հռչակ է վայելում Չուչին, որից խոյս են տալիս լաւերը երկնշէլով մի գուցէ իրենք ևս փոքրանան, նսեմանան, վատանան այդ պատմական մթնոլորտում, որից փախել են դասալիք եղած առաջնորդներն ու տեսուչները սկսեալ Մետրապօլտի և Չանշեանի օրերից. բոլոր արժանաւոր և անարժան գործիչներն այստեղից գնալիս նոյն վշտաւոր զգացմունքով են համակուել, նոյն ճանապարհով են գնացել: Մի երրորդ և նշանաւոր պատճառն էլ Չուչուցը խոյս տուողների համար սակաւ վարձատրութիւնն է. յիրաւի վերը յիշած ճնշող հանգամանքներն հաւասարակշռող մի բան կարող էր լինել առաւ վարձատրութիւնը հայ վարժապետի համար. բայց այդ էլ չկայ. մի դպրանոց որ զուգընթացներով հանդերձ 14 դասարան ունի, հոգևոր սեմինարիայի ծրագիրը, մօտ 600 աշակերտ, 19 վարժապետ, ծախսում է տարեկան 16,000 ուրլի: 16,000 ուրլին այդպիսի դպրանոցի համար հասկացողների աշ-

քում մերկութեան մի ծածկոյթ է միայն: Այդ գումարի 2500ը աւելացնելու պատճառը ես եմ եղել. մեծ մասով այդ այն աւելցուկն է 25-ական և 20-ական դասերի վերայ, զոր հտճեցաւ ընդունել հոգաբարձութիւնը: Քայց քանի անգամ երեսուօս տուած լինին այդ 2500-ը. ինչպէս աւագակների երեսուվը կտան իրենց արարքները և ես անկարող լինելով հասկացնել խնդրի էութիւնը անձայն վշտերուս մէջ եմ որոնել իմ մխիթարութիւնը և ճգնել, որ այդ դրամը հայթայթելու ինքս աշխատեմ և արել եմ տկար ոյժերիս շափով: Այսպէս տարեկան 16,000 է ծախսուում այն հայերի հայրենի քաղաքի հայ վարժարանի վերայ, որոնցից ամեն մէկի որդու համար այդ գումար մի թեթև ճանապարհածախք է զէպ ի Փարիզ, կամ մի երկու անդամուայ կարտի փող. այն հայերի, որոնց փողերով հանրամարդկային հսկայական հաստատութիւններ են կանգնում ամէն տարի, այն հայերի որոնք Փրանսիայում հարիւր հազարներով եկեղեցի են կանգնեցնում առանց հասկանալու թէ այդ եկեղեցիները, այդ վանքերը կօտարանան, բըշակ կդառնան, եթէ հայ վարժարաններից ելած եկեղեցականներ չունենանք: Իբրև Հայոց եկեղեցու անարժան քարոզիչ փորձեր արի իմ քարոզներիս մէջ համոզել թէ հայրենի վարժարանին օգնութիւն անելը դուրս չէ հանրամարդկային քրիստոնէական բարեգործութեան շրջանից. բայց իմ թոթով լեզուս ծաղրուեցաւ, իմ քարոզչական գաւազանս հզօր Մովսէսի գաւազանը չէր որ ժայռ սրտերից ջուր բղխեցնէր մի հարուածով. իմ առջև կեցածների քար սրտերի վերայ գաւազանս ջարդու փշուր եղաւ և հայ վարժարանն էլի ծարաւ մնաց. մինչև իսկ անիրաւութեան երեսէն եղել է որ իմ մխիթարութիւնը որոնել եմ սաղմոսի մէջ «Փոխանակ սիրոյ իմոյ մատնեցին զիս, այլ ես յաղօթս կայի»: Բայց արդարագատութիւնը զիտէ սուտը ճշմարտից ջուր ել: Գան մի տեսակ մարդիկ էլ որ ասում են թէ էջմիածինը թող հոգայ. այդ ոճը գործ դնելով խորթանում են էջմիածնից, պարտքերն էջմիածնի վերայ կուտելով, իսկ յարձակման իրաւունքը իրենց պահելով: Ո՞վ է էջմիածինը, ո՞վ է Հայոց եկեղեցին, չէ որ նոյնինքն Հայոց ժողովուրդը. ինչպէս կարող է էջմիածինը հոգալ, քանի որ իսկական էջմիածինը՝ Հա-

յոց ժողովուրդը խորթացած է նորանից, ինքն իւր գէմ է մաքա-
ռում: Ահեղ պետութիւնները որ գէնք, ոյժ և գանձարան ունին
դարձեալ չեն կարողանում դպրոցական հաստատութեանց բոլոր
ծախքերը հոգալ և մասնաւոր բարեգործներն են որ շատ զբա-
րոցներ բաց անում ու պահում են, մեզնում էջմիրածնի վերայ
պիտի ընկնի բոլոր հոգսը, որից հայ ժողովուրդը պաղել է. 25
որ շատ հայ բարեգործներ շատ հաստատութեանց մեծ նպաստ-
ներ են տալիս, հաստատութեանց, որոնք հովանաւորութիւն և
գանձարան ունին. շատ բարի. հասպա ինչու առևտրի տազնապը
միայն հայ դպրանոցների համար է և միայն աղքատ էջմիրածինը
պիտի հոգայ:

Ինքնասպան և թերահաւատ ազգը միայն կարող է այդպէս
մտածել:

Երկու ուսուցիչ շունենալու այս ձախորդ հանգամանքներու
վերայ աւելացաւ և այն, որ ուսումնական տարին արդէն սկս-
ուած էր, երբ ես գործ սկսեցի, ուստի և ուսուցչացու մարդիկն
արդէն իրենց ապահով տեղերումն էին: Չնայելով դորան թէ
լրագրութեամբ և թէ մասնաւոր ճանապարհներով զիմումներ
կղան: Գտնուեցան մարդիկ, որոնք յօժար էին գալու որոշ պայ-
մաններով. առաջարկում էին դասագինն աւելացնել, տարիներով
ապահովել իրենց պաշտօնը ևն. սակայն ես անկարող էի այդ
պայմաններից գէթ մէկն ընդունել, վասն զի գրաւոր պայմա-
նովս զոր կապած էի պատուարժան հոգաբարձութեան հետ, ես
միայն մի տարուայ տեսուչ էի, ուրեմն տարիներով ուսուցիչ հրա-
ւիրել անկարող էի, երկրորդ նախահաշուի վերայ նոր բան աւե-
լացնելն էլ, որքան և ինձ համար ցանկալի լինէր, ինձնից չէր
կախուած. հոգաբարձութիւնը միջոց չունէր: Ահա թէ ինչու ու-
սուցիչ շունեցանք: Մեր այս որոնումների միջոցին դասերը բաց
չթողնելու համար ժամանակաւորապէս բաժնեցի ուսուցիչների
վերայ. ճիշտ այնպէս ինչպէս լինում է թէ մեր թէ պետական
դպրոցներում նման պայմաններում:

Ռուսաց լեզուի դասը ձրի յանձն առաւ ժամանակաւորա-
պէս դպրանոցի վարդմի տեսուչ և ուսուցիչ, իսկ այժմ հոգա-
բարձու պ. Ջաւադ բէկ Իշխանեանը, որը ի հարկէ երկար շարու-

նակել շէք կարող իւր անձնական գործերի պատճառով: Դեկտեմբերի սկզբներում լնդրագրով դիմեց մեզ Խարկովի համալսարանի իրաւաբանական կաճառի ուսանող պ. Համբարձում Մելքումեանը և լնդրեց Ռուսաց լեզուի դասեր տալ իրեն: Նոյն համալսարանի պ. տեսչի հեռագիրը պատասխան բերաւ մեզ թէ ուսանող Մելքումեանը համալսարանից հեռացել է հիւանդութեան պատճառով. արդեւք չտեսնելով ստիպուեցայ հրաւիրել պ. Մելքումեանին Ռուսաց լեզուի 12 դասով 30 ռուբլի դասագնով մինչև մայիսի վերջը: Դասերի թիւը և ռոճկացուցակը հետեալ կերպով ձևաորուեցաւ:

| ԱՆՈՒԱՆՔ ՈՒՍՈՒՅՉԱՅ | Պաշտօն բացի ուսուցչութիւնից | Քիւշիքի քաւ. | Ամսական ռոճ. Ռ. Կ. |
|--------------------------|-----------------------------|--------------|-----------------------|
| Տ. Կարապետ ք. Վարդապետ. | | 17 | 42 50 |
| պ. Սամուէլ Գիւլղատեան | | 10 | 28 33 |
| պ. Արշակ Տ. Միքելեան | | 28 | 107 66 |
| պ. Արշակ Չիլինկարեան | | 30 | 115 33 |
| պ. Քրիստափոր Փերջ. | | 30 | 75 |
| պ. Արշակ Տ. Ոսկանեան | Վերակացու | 15 | 70 83 |
| պ. Գարրիէլ Ղուլիքեխեան | | 23 | 57 50 |
| պ. Հայկ Յովհաննիսեան | | 30 | 75 |
| պ. Աղեքսանդր Թարխանեան | Գրադարանապետ | 30 | 83 33 |
| պ. Կարապետ Թինիրէկեան | | 30 | 75 |
| պ. Պատուական Քուշմ. | Ա. վերակացու | 15 | 70 83 |
| պ. Հայկ Յովակիմեան | Վերակացու | 20 | 66 66 |
| պ. Յարութիւն Պօպովեան | | 29 | 72 50 |
| պ. Մկրտիչ Տ Սահակեան | Քար. մանկ. ժող. | 22 | 63 33 |
| պ. Համբարձում Արոյեան | Վերակացու | 14 | 68 33 |
| պ. Լեոն Աղախանեան | | 22 | 55 |
| պ. Համբարձում Մելքումեան | | 12 | 30 |
| Տ. Բենիկ վարդապետ | Տեսուչ | 4 | 125 |
| | | | 1282 13 |

Դասերն այս բաշխումով շարունակուեցան կանոնաւոր ընթացքով մինչև ուսումնական տարուայ վերջը. ի հաշիւ առնելով որ ժամանակաւորապէս բաժանուած դասերի մի մասը 30ակա-

նով տրուեցաւ, որոնք 46 ական դասագին ունէին ի հաշիւ առնելով Զաւատ բէկի կարճաժամանակեայ 8 դասի ձրի լինելը և բաց դասերի գինը, բնականաբար նախահաշուից պակաս պիտի լինէր ծախքը. պակասն եղաւ 1166 ռ. 83 կ. որը դուրս գալով 16180 կստանանք 15013 ռ. 17 կ. տարեկան ծախք ուսումնական մասի վերայ:

2նայելով որ սեպտեմբերի 2-ին և պաշտօնական տեսուչ ճանաչուել և ուսուցչական պատրաստի խումբ շկար, այնուամենայնիւ անդու աշխատանքով 154 վերաքննելի 153 նոր ընդունուող աշակերտ ենք քննել և ուսումն սկսել ենք սեպտեմբերի 9-ից, որ տեւել է մինչև մայիսի 20-ը բոլոր դասարանները և ապրիլը 8-ը՝ Ա. դասարանի համար. ուսման օրերի թիւն է տօն և կիւրապէ օրերը հանած 185 կամ 6 ամիս 5 օր: Այդքան ժամանակում ուսուցիչները պարապել են, դասեր են բաց թողել, աւելի են պարապել ըստ այսմ:

| ԱՆՈՒԱՆՔ ՈՒՍՈՒՑՉՆԵՐ | Պարապած դասեր | Անկ. պր. դաս. | | Պարապ. դասերի դում. | ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ |
|-----------------------|----------------------------------|---------------|--------------------------------|----------------------------------|--------------------------|
| | | Բաց թողած դաս | Կարգ. դաս | | |
| Հայր Տ. Կարապետ | 423 ¹ / ₂ | — | 11 ¹ / ₂ | 423 ¹ / ₂ | Օրինակատրթ ենց. պտճ. |
| պ. Սամուէլ Գլուզատեան | 263 | — | 1 | 263 | Հիւանդութեան պտճ. |
| » Արշակ Տ. Միքիլեան | 427 ¹ / ₂ | — | 257 | 427 ¹ / ₂ | Հիւանդութեան պտճ. |
| » Արշակ Զիլինկարեան | 758 | — | 4 | 758 | Ընտանեկան յրդ. պտճ. |
| » Պատուակ Քուզմանեան | 372 | 6 | 7 | 378 | Հիւանդութեան պտճ. |
| » Աղեքս. Թարխանեան | 747 ¹ / ₂ | — | 26 ¹ / ₂ | 747 ¹ / ₂ | |
| » Հայկ Յովհաննիսեան | 687 | — | 40 | 687 | Հիւնդ. պտճ. սեպ. ուշաց. |
| » Համբարձում Արովեան | 357 | 5 | 13 | 362 | Ընտանեկան. յրդ. պտճ. |
| » Հայկ Յովակիմեան | 510 | 6 | — | 516 | |
| » Արշակ Տ. Ոսկանեան | 358 | 12 | 31 | 370 | Ընտ. յրդ. և տն. վրկ. հ. |
| » Մկրտիչ Տ. Սահակեան | 563 | 4 | 2 | 567 | |
| » Լևոն Աղախանեան | 548 | 1 | — | 549 | |
| » Կարապ. Թիւնիբէկեան | 798 | — | 5 | 798 | Հիւնդ. և յրդ. պտճ. |
| » Յարութիւն Պօպովեան | 724 | 4 | 32 | 728 | Հիւանդ. և յարդ. պտճ. |
| » Քրիստփ. Փիլքոնեան | 664 | — | 2 | 664 | Ընտանեկան. յարդ. պտճ. |
| » Գարր. Ասլիբէկխայեան | 582 | — | — | 582 | |
| » Համբարձ. Մելքումեան | 159 | 30 | 3 | 189 | Յարգելի պատճառով |
| Տ. Բենիկ վարդապետ | 109 | 30 | 17 | 139 | Յրդ. պ. շուշց. բցկ. և հ. |
| | 9052 ¹ / ₂ | 98 | 453 | 9150 ¹ / ₂ | |



| ԱՆՈՒՆԵՐ ԴՇՍԻԵՐԿՈՍ | ԴՇՍԵՐՈՒ |
|-------------------------|------------------------|
| պ. Արշակ 2 իլինկարեան | Զ-րդ դասարան |
| պ. Արշակ Տէր Միրելեան | Ե-րդ դասարան |
| պ. Աղեքսանդր Թարխանեան | Գ-րդ դասարան |
| պ. Հայկ Յովհաննիսեան | Գ-րդ դասարան |
| պ. Կարապետ Թիւնիբէկեան | Ե-րդ դասարան |
| պ. Համբարձում Արովեան | Ա. Հիմնական դասարան |
| պ. Արշակ Տ. Ոսկանեան | Ա. Զուգընթաց դասարան |
| պ. Հայկ Յովակիմեան | Գ. Հիմնական պատրաստկն. |
| պ. Մկրտիչ Տ. Սահակեան | Գ. Զուգընթաց » |
| պ. Քրիստափոր Փիքջանեան | Բ. Հիմնական » |
| պ. Գաբրիէլ Դուլիբեկեան | Բ. I Զուգընթաց » |
| պ. Լևոն Աղախանեան | Բ. II Զուգընթաց » |
| պ. Պատուական Քուշմանեան | Ա. Հիմնական » |
| պ. Յարութիւն Պօպովեան | Ա. Զուգընթաց » |

Այս ուսումնական տարուայ ընթացքում սկսեալ 1900 սեպտեմբեր 11-ից մինչև 1901 թուի մայիսի 30-ը ունեցել ենք ԻԳ. մանկավարժական ժողով. ժողովների նիւթ են եղել հետևեալ խնդիրներն ընդհանուր գծերով՝ դասերի բաշխումն, աշակերտաց ընդունելութիւններ, վերաքննութիւններ, դաստիարակչական գործի կազմակերպութիւն, աշակերտական ընթերցանութեան խնդիր, երկամսեակի և վարքերի խնդիրներ, մանկավարժական պատիժներ, դաստիարակչական ընդհանուր միջոցներ, աղքատ աշակերտաց վերայ հոգալու գործի կազմակերպութիւնը, ուսմունքների ծրագրեր, դպրոցական հանդէսներ, որդեգիրները ընտրութիւն, վկայագրերի խնդիրներ, քննութիւններ, տեղափոխութիւն, արձակումն են. ևն.

Ժողովներից ուսուցիչները բացակայել կամ ուշացել են ըստ այսմ.



| ԱՆՈՒԱՆՔ ՈՒՍՈՒՑՁԱՅ | Կիւտիւնքն է քանակը քանի | Ինչ պատճառով. | Քանի անգամ է ուշացիլ և որքան. | Ինչ պատճառով. |
|------------------------------|-------------------------|---|-------------------------------|----------------------|
| 1. Պ. Հայկ Յովհաննիսիան | 1 | Հիւանդ. պատճառով | " | " |
| 2. Հ. Տ. Կարապետ | 8 | 1 Տես. թող. 4 հ. 2 անյայտ և 1 յարգ. պատճ. | 3, 3 1/2 ժամ | Անյայտ պատճառով |
| 3. Պ. Սամուէլ Գիւլբատիան | 4 | 3 անյայտ և 1 հիւանդ. | " | " |
| 4. Պ. Արշակ Տէր-Միքէլեան | 20 | Հիւանդութ. պատճառ. | 2, 3 ժ. | Անյայտ պատճառով |
| 5. Պ. Արշակ Չիլինկարեան | 1 | Անյայտ պատճառով | 4, 1 1/2 ժ. | Անյայտ պատճառով |
| 6. Պ. Քրիստափոր Փիլըճանեան | 2 | Անյայտ պատճառով | 6, 5 ժ. | Անյայտ պատճառով |
| 7. Աղեքսանդր Թաքտանեան | 4 | 3-ը հիւանդ. 1 անյայտ | " | " |
| 8. Պ. Գաբրիէլ Ղուլիքիսիան | 2 | Անյայտ պատճառով | 5, 5 ժ. 40ր. | Տեսչի թողյունութեամբ |
| 9. Պ. Յարութիւն Պօստիկան | 1 | Տեսչի թողյունութեամբ | 1 1/2 ժ. | Անյայտ պատճառով |
| 10. Պ. Պատուական Կուշմանեան | 1 | Հիւանդութեան պատճ. | 1, 20 ր. | Անյայտ պատճառով |
| 11. Պ. Կարապետ Թիւնիքէլեան | " | " | 1, 1 ժամ | Յարգիլի պատճառով |
| 12. Պ. Արշակ Տ. Ոսկանեան | 4 | Յարգիլի պատճառով | " | " |
| 13. Պ. Համբարձում Մեղքումեան | " | " | 1, 3/4 ժ. | Անյայտ պատճառով |

Այս ուսումնական տարում դպրանոցիս պատուելի հոգաբարձու պ. Իսահակ Թաղէոսեանը շնորհակալութեան արժանի բարիքներ է արել դպրանոցին. սաների համար արածները կը յիշեմ իւր տեղում, իսկ այժմ քանի որ խօսքը դեռ ուսուցչաց մասին է կ'յիշեմ, որ պ. Թաղէոսեանը ուսուցչաց ընթերցանութեան կարևոր ամսագրերի և օրաթերթերի համար նուիրել էր 75 ռ.: Այդ դրամով մանկավարժական ժողովը ընտրեց և բերել տուա հետևեալ հանդէսներն ու թերթերը.

1. Природа и люди
2. Вѣстникъ Воспитанія
3. Педагогическій сборникъ
4. Вопросы философіи и Психологіи
5. Սուրհանդակ
6. Լուսայ
7. Աղբիւր Տարազ
8. Նոր-Դար
9. Մշակ
10. Ազգագրական հանդէս

Այս ամսնի բաժանորդագիրը և ճանապարհածախքը նստել է ընդամենն 71 թ. 74: Մնում է մեզ մօտ պ. Թաղէոսեանին վերագործնելու 3 թ. 26:

Դպրանոցի ընդհանուր վարչութիւնը երկու մեծ խմբակցութեան է բաժնուած. հոգաբարձութիւն զլուխ ունենալով սրբազան առաջնորդին, մանկավարժական ժողով զլուխ ունենալով տեսչին: Վերջինս էլ երկու մասն է ունեցել՝ դաստիարակչական վարչութիւն այսինքն զուտ մանկավարժական ժողով և գործադիր կամ հսկիչ վարչութիւն, որի կազմի մէջ մտել են մի աւագ վերակացու տեսչի օգնականի փոխանակ և երեք վերակացու:

Վարչական ընդհանուր կազմի մէջ եղած անձնաւորութիւնները տարբեր կրթութեան, տարբեր հասկացողութեան, տարբեր սրտի տէր մարդիկ են, ուստի և բնական է որ ամէնքը միակերպ չէին կարող տեսնել այն նպատակակէտը, որ ամէնքի

համար ընդհանուր է, սուրբ է: Միակերպ ցոյց տալու համար անհրաժեշտ էր վարչական անդամների յարաբերութիւնները սահմանող որոշ կանոններ. բայց այդ թերութիւնից տեսչի գրութիւնը սաստիկ ծանրանում է: Հեշտ չէ և՛ գործ վարել արժանապէս և՛ մօտ 600 ուսող, ուսուցանող, կառավարող բազմութեան զոհ կացուցանել: Բայց ես հաւատացել և հաւատում եմ թէ արդարութիւնը և անաշառ խստութիւնը գործի սիրու և անձնական հեղութեան հետ մէկտեղ կլրացնեն այդ թերին և ամէնքի յարաբերութիւնը սերտ կ'զարհեն: Իմ այդ հաւատս մի ճառով եմ արձանացուցել, զոր ստորագրած են բոլոր ուսուցիչները. իբրև կնիք մեր ուխտի պատճէնը տրուած է հոգաբարձական խորհրդին: Ես կղնեմ այստեղ իմ սրտի լաւագոյն խորչէն սկիզբն առած այդ արձանագրութիւնը, ուր կպարզուի ձեզ համար այն ոգին, որ ես հետս ունիմ և թող բողոք լինի այն գիտակցական սխալներ քարոզողներու դէմ մեր վարչութեան նկատմամբ: Ահա այդ արձանագրութիւնը.

Ուր երեք հոգի կան հաւաքուած իմ անունով, ես այնտեղ եմ, ասում է աշխարհի Փրկիչը՝ մատաղ և յոյսեր արծարծող սերնդի ճշմարիտ բարեկամը: Այստեղ հաւաքուած ենք երեքից շատ աւելի անձինք Տիրոջ անունով. նորա սուրբ գործի՝ այն է կեանքի վերանորոգութեան համար մատաղ սերնդի դաստիարակութեան միջոցով և ուրեմն մեր ժողովների մէջ ներկայ է նա, մարդկային կեանքի իզէալն ու ամենազօր հովանաւորը: Այդ ներկայութիւնը ինքն ըստ ինքեան սրբութիւն է տալիս մեր ժողովներին և ժողովատեղուն: Քորեք սարի քով մի մորենի բորբոքում բոցավառուում էր ու չէր այրուում, չէր մրկում. այդ մորենուց ազգի վերանորոգութեան առաջնորդացու Մովսէսին է հասնում Տիրոջ անեղ ձայնը. «Լոյծ զիօշիկզ ոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու երկիր սուրբ է»: Նոյն ձայնը հասնում է ձեզ, սիրելիք, Լուսաւորչի Մեծ Աստուծուց, տառապանքների ծովում դարերով լողացող մի ժողովրդի Աստուծուց. հանէք, ընկեցէք ձեզնից արտաքին վաղանցուկ ու մուլար ոգին, զոտերուեցէք ազնուութեան, անխարդախ ընկերսիրութեան, անգուլ աշխատութեան զգացմունքով, հեռի ետական և նեղսամիտ կու-

սակցական հակամիտութենէն, վասն զի տեղիդ յորում կացէք Գուք երկիր սուրբ է: Յուշ լիցի ձեզ, սիրելիք, թէ Հայոց մորենին, որ դարերով կ'վառի երբէք չի այրուի, չի փոշիանայ, եթէ հայ մնացորդի բարոյական-կրօնական վերանորոգութեան սուրբ գործով տոգորուած հայ վարժապետն զգայ թէ այն տեղը, ուր ինքը կանգնած է երկիր սուրբ է:

Ա՛րդ, որո՞նք են այն պայմանները, որոնցով հայ վարժապետը տաճարացնում է իւր կանգնած տեղը, վսեմացնում սրբացնում իւր կոչումն, ու ինքն էլ նորանով սրբանում:

Ամենէն առաջ հայ վարժապետը պիտի ճանաչի ինքզինք, գիտակցի թէ ինքը յիրաւի ամբոխի զաւակ է, բայց սուրբ գործի համար է կոչուած, այսինքն չէ՛ ամբոխ, ուստի և միշտ մեծ մարդկանց օրինակովը քաջալերուելով դադարում է ամբոխի կարծիքներով առաջնորդուելուց, որպէս զի հնարաւորութիւն ունենայ ամբոխի մոլար հայեացքների մէջ փոփոխութիւն ձգել, իւրը՝ իրեն բարձր ու վսեմ օրինակ տալով: Այս տեսակ ուսուցիչը վեր է անձնական հաշիւներէց, չի կարօտում ամբոխի ծափերին և շատ անգամ մխիթարութիւն է գտնում նորա արհամարհանքների ու անմիտ հալածանքի մէջ, որոնք ամենաբարձր վկայական են դրական առաքինութեանց:

Մի այլ տեսակէտից հայ վարժապետը կոչուած է նոր սերունդ, ընտիր մնացորդ դաստիարակելու բարոյական աւետեաց երկրի յոյսերով. թող մեր աւագ սերունդը թաղուի ու թաթախուի իւր մոլորութեանց մէջ, թող արծաթի և օտարասիրութեան փոշին ծանրանայ նորա արտեանունքների վերայ, թող նեղ անձնասիրութեան ոգին պառակտէ նոցա ու ցիր ցան անէ ատելութեան անապատներում, ուր նոքա աւետեաց երկիրը տեսնելու անյոյս շունչը պիտի փչեն, աւագի տակ թողնեն իրենց ոսկորները, հայ վարժապետը ընտիր մնացորդին պիտի առաքինութեան հոգի ներշնչէ, Յիսուսի նման աչքը միշտ բարոյական վերանորոգութեան աւետեաց երկիրն յառած պահէ, ու երբէք յետ չնայէ անապատի ցաք ու ցրիւ դիտակներին, այո՛ երբէք չնայէ, վասն զի ով իւր դէմքը վերստին դէպի ապականութիւն դարձնէ, աւագ, քարի արձան պիտի դառնայ Ղովտի կնոջ նման, որ Սոդո-

մի կեանքի ցանկութեամբ իւր պարտքը մոռացաւ ու յետ նայեց:
Ահա թէ ինչպիսի անդունդ կայ հայ վարժապետի և հայ
ամբոխի մէջ: Դուք կանգնած էք անդունդի բարձունքում, սիրե-
լիք, իսկ վարը ամբոխն է խարխափում մթութեան մէջ. ձեր
ձեռքում գիտութեան ճրագ կայ, որ պիտի դնէք ամբոխի դի-
մաց, որ դէպի ձեզ բարձրանայ. չլինի թէ ծուլութեան քունը
ծանրացնէ ձեզ և դուք գլորուիք դէպի ամբոխն ու հանգչի ձեր
լուսատու լապտերը:

Ամբոխի ձորակը չգլորուելու համար ամբոխի այն գործե-
րից հեռու կենալու է, որոնցով ցողուած է կորստեան լայն ճա-
նապարհը. օտար խորշակ եկել զարկել է հայ ժողովրդի ընտա-
նեկան փայլուն կեանքին ու խամբում դալկանում է լաւագոյն
ժաղիկն այնտեղ. հայ մարդն այսօր օտար հասարակական կեանք
է ընտրել. ժողովարան, հիւրատուն փոխարինել են ընտանեկան
բարեկամական հաւաքումներին, թոչնել է հիւրասիրութեան վար-
դը հայու: Այդ ժողովարաններում տիրապետում է թղթախաղու-
թիւնը, որ ոչ այլ ինչ է, բայց եթէ օրինական աւազակութիւն.
աւանդ, որպիսի հեշտութեամբ զրկուում է խաղացողը ամիսների,
տարիների տքնութեամբ վաստակած դրամից: Նա կողոպտում է
իւր ընտանիքի աւուր հացը, ինքզինքն է կողոպտում, ապա ինքն
էլ ընկնում այլ աւազակների ձեռք. յանցագործ են և տանողը
և տարուողը: Այս գործն ինքն ըստ ինքեան յանցանք է, վասն
զի չկայ և ոչ մի թղթամուլ, որ իւր արհեստը առաքինութիւն
համարէր. իսկ հայ վարժապետի համար թղթախաղի վնասը մի-
այն այդ չէ: Թղթասէր վարժապետը գողանում է իւր ժամանա-
կը, որ աշակերտների պատրաստութեան գործին է նուիրուած.
Նա զրկում է իրեն յառաջադիմելու կարողալու հնարաւորութիւ-
նից, աշակերտների նկատմամբ դառնում է վարձկան, իւր վե-
րաբերութեամբ՝ յետադէմ: Նա քարանուում է մտքով, միշտ ալե-
կոծուում տարած ու տարուած դրամի շուրջը: Այս իսկ տեսու-
թեամբ եթէ կեանքի սովորական մարդուն ներելի է թղթախա-
ղը, ուսուցչին ներելի չէ. հեռու կենալ ընդ միշտ թղթախաղից
ընդհանրապէս և ալիքանոցի թղթախաղից՝ մասնաւորապէս պա-
հանջ է. այդ պահանջն ի կատար ածելու համար խօսք տուած

հմ պատուարժան հոգաբարձութեան և սրբազան առաջնորդ հօր, որոց առաջ միակ երաշխաւորն հմ իմ ընկերակից ուսուցչացս համար:

Ոչ որ թող շառարկէ թէ հասարակական կեանքից կըտրուում է ուսուցիչը և քարանուս իւր ընտանեկան անձուկ յարկում, եթէ նորա առջև փակուում են հասարակական զուարճութեանց տեղերը: Ընկերական շրջան ստեղծել, ուր զբաղանութիւնը, մանկավարժական խնդիրներ, կրօնական բարոյական կեանքի ուսումնասիրութիւնը, բանաստեղծութիւն են. յեղյեղուին ու բարձր բաւականութիւն տան մասնակցողներու մտքին ու զգացմունքին, միայն ուսուցչի գործ է, իսկ այս բանի համար իւրաքանչիւր ուսուցչի առնը՝ իրրե ընկերի տուն, միշտ պատրաստ կլինի ուսուցիչ ընդունելու, կենդանի կապ ու հարազատութիւն պահպանելու յանուն վսեմ ուսուցչութեան:

Բաց յայդմանէ, հայ ուսուցիչը միայն դպրոցում չէ ուսուցիչ իւր աշակերտների համար, այլ նա ուսուցիչ է ամէն տեղ, ուր հայ մանուկ կայ, ապա ուրեմն ընտանիքներում և հրապարակում, տանը թէ եկեղեցում նա իւր խօսակցութեան վայելչութեամբ, վարմունքի ազնուութեամբ, մտքերի թարմութեամբ, շարժումների համեստութեամբ միշտ օրինակ պիտի լինի. այն ժամանակ միայն դպրոցի աւանդածը չի կորչի, որ լոկ տեսութիւն է, այն ժամանակ ուսուցիչը ամէն տեղ յարգելի և անհրաժեշտ կլինի իրրե առաքինութեանց առաքեալ, այն ժամանակ հարուստ անգէտը վարձկան մշակ չի համարի ուսուցչին ու նախ ինքը կխոնարհի նորան հանդիպելիս:

Այլևս մի «Մեղք որ գրչաւ երկաթեաւ գրեալ է ի տախտակս կրծից որդւոց Թորգոմայ» նեղ կուսակցութեան աւերիչ ոգին է, որ արտաքին բաժանման շնչով է յառաջ խաղում և հայ մարդը, «որ արբեալ է բայց ոչ ի գինւոյ», չի տեսնում. այդ նեղ ոգին չէ գիտակցութիւնից բղխած յառաջագիմելու ցանկութեամբ զեղուն կուսակցութեան ոգին, այլ անձնական հաշիւների, շահուց մոլար առաջնորդողների և գիտակցութիւնից զուրկ խեղճ հետևողների ոգին, որ պառակտում ջլատում է այն ամէնինչ որ կապում է արեւնակիցներին իրար հետ. այդ ոգու ձեռ,

քին խաղալիք են դարձել մեր ազգային սակաւ հաստատութիւնները, որոնք հետզհետէ մաշուում են և՛ տնտեսապէս և՛ մտաւորապէս և բարոյապէս: Տեսուչների յաճախակի փոփոխութիւնները, ուսուցիչների արձակումները, հին ու նոր վարչութեանց անհետողականութիւնը և յաճախ հակասական սկզբունքներն ու գործերն այդ տգեղ ոգու տխուր արդիւնքներն են: Գրանից անմասն պիտի մնան ուսուցիչները. եթէ ուսուցիչը մի բարձր կուսակցութիւն դաւանելու պէտք ունի, այդ կուսակցութիւնը պիտի լինի յանուն ուսուցչութեան, յանուն դաստիարակութեան, որ եղբայրացնէ բոլոր ուսուցիչներին ու բարձրացնէ նոցա ամբողջի կուսակցութիւնից. մինչդեռ ցաւ ի սիրտ պիտի ասեմ թէ ես չեմ տեսել մի դպրոց, որ կուսակցութեամբ բաժան բաժան լինի, որ աշակերտների անկարգութեամբ աղմկուի, որ ամբողջ անմիտ յարձակումներին ենթարկուի առանց ուսուցիչների մասնակցութեան. միայն և միայն անարժան և իւր կոշումը չհասկացող ուսուցիչն է դպրոցի վարկը ձգող, աշակերտների լաւագոյն զգացմունքները հարստահարող և վերջ ի վերջոյ ինքն էլ իրբն մի բեկոր իւր ձեռքով տապալած բարոյական աւերակի մէջ ընկնողը: Իմ աղաչանքն այս է՝ ձեզ, պարոններ, որ չարամտութեան ու տգիտութեան նեղ ոգուն առուակ չը դառնաք դէպի դպրանոցը, այլ պատնէշ, որի վերայ նորա ալիքը փշրուի ու յետ դառնայ:

Այս պարտքերն ուսուցչի պարտքերն են արտաքոյ դպրոցի-ուսուցիչը պարտաւոր է և այնպիսի առաքինութիւններ ունենալ, որոնք դպրոցի կազմակերպութեան մէջ են հանդէս դալիս, զըլխաւորապէս պարտքեր առ աշակերտս, առ միմեանս, առ տեսուչ, առ հոգաբարձուք և առ սրբազան առաջնորդն:

Առ աշակերտս ունեցած պարտաւորական առաքինութիւններից առաջինը բարեխղճութիւնն է: Նուաստս իբրև ծխական դպրոցների տեսուչ, երբեմն այլ թեմական դպրանոցի տեսուչ և տարիների ուսուցիչ, դիտած եմ հայ վարժապետներին ու եկած այն եզրակացութեանը թէ ուսուցչաց պաշարի պակասութիւնը չէ պատճառ մեր վարժապետների մտաւոր և բարոյական յետադիմութեան, այլ անբարեխղճութիւնը, վարձկանութիւնը: Անբա-

բեխիղճ է ուսուցիչը, երբ իւր աշակերտի վերայ հարազատի սրբ-
տացաւութեամբ չի նայում, երբ տրամադրութիւն չունի ի պա-
տահել հարկին, «դնել զանձն իւր ի վերայ ոչխարաց». չէ որ
ծնողներն ամենայն վստահութեամբ իրենց ամենաթանկ բանը
աշխարհի ուսուցիչների խնամքին են յանձնում: Անբարեխիղճ է
այն ուսուցիչը, որ առանց պատրաստուելու դասարան է մտնում
և վատնում է աշակերտի ոսկի ժամանակը, անսիստեմ խօսակ-
ցութեամբ կամ կողմնակի խօսակցութեամբ. անբարեխիղճ է այն
ուսուցիչը, որ ինքը քարանում է ու մշտական ընթերցանութեամբ
չի զբաղուում ու ամէն տարինոր ոգևորութիւն չի մտցնում իւր
առարկայի ուրեմն և իւր սաների մէջ: Ես տեսայ քիչ պատրաս-
տութեամբ արգիւնաւոր ուսուցիչներ, որոց համար բարեխղճու-
թիւնը առաքինութիւն էր. ես տեսայ շատ պաշարով ապարդիւն
ուսուցիչներ, որոնք բարեխղճութիւնը առաքինութեանց շարքից
հանել էին:

Ուսուցիչը պարտաւոր է նաև իւր վարմունքի մէջ առ աշա-
կերտս ազնիւ և հարազատ լինել. կուզեմ ասել թէ կան ուսու-
ցիչներ, որոնք բռնաւորի վարկ են ստանում աշակերտների աշ-
քում իրենց պաղ և անտեղի խստութեամբ, աններողամիտ բնա-
ւորութեամբ, որ թշնամութեան կերպարանք է ստանում. այս
տեսակ ուսուցիչը ատելութիւն է յուզում ոչ միայն դէպի ինքն,
այլ և դէպի իւր աւանդելիք առարկաները: Միւս ծայրայեղու-
թիւնն էլ այն է, որ ոմանք ուսուցիչներից մոռանալով իրենք
զիրենք և աշակերտներից սիրուելու մի առանձին հիւանդութիւն
ունենալով շոյում են իրենց սաների յեղյեղուկ զգացմունքները,
նոցա ծուլութեան և անկարգութեան վերայ ժպիտով են նայում,
նոցա արժանիքից վեր թուեր են դնում, շատ անպամ դասից
չեղուելով անտեղի զրոյցներով են զբաղուում ի հաճոյս աշա-
կերտելոց. ևն:

Բազմիցս դիտած եմ թէ այս տեսակները պաշարից պա-
կաս մարդիկ են, որոնք անկարող են իրենց աւանդելիքով յար-
գանք շահել աշակերտների մէջ ու յենուում են անվայել յինա-
բանի վերայ: Այս տեսակ ուսուցչի տուած վնասն երկուստեք է,
նախ՝ ապարդիւն է անցնում աշակերտի ժամանակը (և թող հա-

մոզուած լինի այդպիսին, թէ դպրոցն աւարտելուց և գիտակցութեան գալուց յետոյ աշակերտի երևակալութեան առաջ կպատկերանայ իւր գատարկութիւնը և առ նոյն ուսուցիչն ունեցած սէրը ատելութեան կփոխուի) և երկրորդ՝ այդ չափազանց մեղմութեան առաջ առաւել մեծանում է միւս ուսուցիչների կամ վերահացուների խստութիւնը աշակերտի աչքում, որով և առաւելանում է ատելութիւնը կամ առ նուազն՝ պաղութիւնը դէպի վերջինները:

Փորձողի, անազնիւ է ուսուցիչը, երբ իւր անձնական համալիրութեանը առ որ և է աշակերտ կամ բարեկամութեան առ նորա ծնողները զոհ է բերում արդարութիւնը, խտրութիւն է գնում իւր աշակերտների մէջ: Ուսուցիչը արդարութեան և սիրոյ մէջ հաւասարասէր է լինելու, եթէ նա բարեկիրթ ուսուցիչ է:

Կարելի է համարձակ ասել թէ այս ամէնը իրականութիւն կունենայ, եթէ որ ուսուցիչներն իրենց պարտքերու մէջ առ միմեանս ճշտապահ և ազնիւ լինին: Ես տեսել եմ շատ ուսուցիչներ, որոնք ամենամանր բաների համար, օրինակ՝ մի քանի ռուբլի աւելի ստանալու համար, աշակերտներին սիրելի, իշխանաւորին առաւել համակրելի լինելու համար են. նախանձի տգեղ գգացմունքով են լցուել դէպի իրենց ընկերները ու ընդ միշտ փակել են իրենց բերանը ու ականջը ընկերի մասին լաւը խօսելու և լսելու, ու միշտ բաց են պահել վատաբանելու և չարը լսելու: Բայց ես չգիտեմ մի բարեկիրթ ու շնորհալի մարդ, որ նախանձի այս սև տեսակն ունենար: Ուսուցչի վարկը ժողովրդի և աշակերտի աչքում ձգողը միայն իւր ընկեր ուսուցիչը կարող է լինել. իսկ ուսուցիչների ընկերատեսցութեան ու հիւանդ նախանձոտութեան մէջ սեանում, ոչնչանում է հաւասարութեան փայլը և ուսուցչի վարկը: Այս չէ՛ պատճառն արդեօք, որ օտար գուցէ աւելի թերութիւններ ունեցող ուսուցիչը, որ երբէք իւր ընկերի վատը չի խօսում, յարգում է հասարակութեան առաջ, իսկ հայ վարժապետը, որ շատ աւելի յարգանքի է արժանի իւր տքնութեամբ, իւր սակաւապետութեամբը, դուրկ է այդ յարգանքից: Այս էլ յիշեմ, եղբարք, թէ շատ անգամ մի նենգաւոր ժպիտն ընկերի հասցէին շատ աւելի թունաւոր է և պերճախօս աշա-

կերտների և ժողովրդի վատ կարծիքը զրաւելու դէպի ընկերը, քան բաղմարաւ ճառերը: Արդ, թախանձում եմ ձեզ, սիրելիք, այս պարտքը որ ձեզ վերայ եմ դնում կատարեցէք, այն է նրքէք ընկերի մասին վատ չխօսել, այլ միշտ լաւը. իսկ միմեանց թերութիւնների համար բարեկիրթ մարդու քաջութեամբ միմեանց երեսին ասել և փոխադարձաբար ուղղուել:

Ուսուցիչների առ միմեանս ունեցած պարտքերից ինքն ըստ ինքեան բղխում է նոցա պարտքերն առ տեսուչն. եթէ ես ծաղկէ փնջի նմանեցնեմ ուսուցչական խումբը, տեսուչը կնմանի այդ զանազան ծաղիկները կազմող, փնջող, միացնող թելին. կտրեցէք թելը կամ այրեցէք, փունջը կցրուի, կթափուի ու ինքն էլ ամբոխի օտից կոխան կդառնայ: Ափսո՛ս, հաղար ափսոս, որ հայ վարժապետների չար ու սուր լեզուն շատ անգամ է կտրել այդ թելը ու ինքն էլ ցրուել իւր հետ ցրիւ տալով և գեղեցիկ գործը, քրտինքով ժողովուած արդիւնքը. չլինի թէ, եղբարք, այդ տղեղ երևոյթը ձեզնում հանդէս գայ, որ կորստաբեր է. օրինակ առէք պետական դպրոցների առ իւրեանց տեսուչներն ունեցած յարաբերութիւնից. տեսել էք դուք որ նոցա ուսուցիչը ընտանիքներում և հրապարակում, դպրոցում թէ դուրսը վատաբանէ իւր իշխանաւորին, անքաղաքավարի զանուի դէպի նա ու իւր տեղը մնայ: Այս ոգին պիտի թագաւորէ և ձեր մէջ: Դուք մի կարծէք թէ ես իմ անձիւս համար եմ ասում, քաւ լիցի, ես ի՛նչ եմ հաստատութեան ու սուրբ գործի առաջ, եթէ ոչ հող և մոխիր, այլ այսպէս պիտի լինի, վասն զի այդպիսի յարաբերութեամբ միայն հաստատութիւնը կանգուն կմնայ: Ձեր պարտքն և իրաւունքն է ձեր տեսչի մասին ոչ միայն վատը չըխօսիլ, այլ անիրաւ լեզուները սանձել, իսկ տեսչի սխալանքների մասին ազատ ու համարձակ իրեն հետ խօսել, որով և երախտապարտ կլինի ձեզ ու շնորհակալ:

Դուք էլ տեսչից պահանջելու իրաւունքներ ունիք, որոնք կազմում են նորա պարտքն առ ձեզ. տեսուչը պարտաւոր է արդարասէր լինել, այսինքն զնահատել իւր ուսուցիչներին ըստ արդեանց նոցա. նա պարտաւոր է ամենուրեք իւր ուսուցիչների մասին միշտ լաւը խօսել, ջանալ, որ արհամարհուած հայ ուսու-

ցիշը բարձրանայ յաչս ամենեցուն և սիրելի դառնայ: Տեսուչը պարտաւոր է անձնական համակրութեան զոհ չընել արդարութիւնը և գործը. բացատրեմ այս հանգամանքը մի պատմական օրինակով. հարագատ որդուն հօր բնական համակրութիւնը ամենքիդ հասկանալի է ու պարզ: Հռոմի զիկտատօրներից մէկը այդպիսի համակրութեամբ էր կապուած իւր զինուորական տաղանդաւոր որդու հետ: Պատերազմի ժամանակ որդին իւր զընդապետի հրամանին հակառակ ընթացաւ, կռիւն սկսեց և յաղթութիւն տարաւ. Հռոմի օրէնքն անհնադանդ զինուորականին գլխատում էր. ամբողջ Հռոմը գլխիկոր աղերսում էր զիկտատօրին խնայել իւր որդուն գէթ ինկատի ունենալով այն փառաւոր յաղթութիւնը, որ այդ սխալանքի հետեանքն էր: Սակայն զիկտատօրը խուլ մնաց այդ թախանձանքների առաջ և իւր անձնական բնական համակրութիւնը զոհ բերաւ օրէնքին և արդարութեան. սոսկալի հրամանը դուրս թռաւ զիկտատօրի շըրթունքներից, շողաց դահճի սուրբ ու քաջարի զինուորական որդու արիւնաթաթախ գլուխը անողորմ հօր ոտքերի քովն ընկաւ:

Քաւ լիցի թէ ես յանդգնիմ կարծել թէ իմ արդարասիրութիւնը այս աստիճանի է, սակայն վստահեցնում եմ ձեզ, որ ձգտումն դէպի այն աշխատում եմ զօրացնել իմ սրտում: Ուստի կխնդրեմ որ իմ անձնական համակրութիւնս առ մէկը կամ միւսը, որ հետեանք կարող է լինել երկարամեայ ծանօթութեանս, ուսուցչի և աշակերտի կապակցութեան (ոմանք ձեզնից ինձ աշակերտել են), տրտունջ չյարուցանէ ձեր մէջ. վստահ եղէք, որ համակրութեանը զոհ չեմ տայ արդարութիւնն. այստեղ վկայ են ոմանք, այս մօտիկ անցեալում խօսքերիս հաստատութեան օրինակ եղաւ. իմ անձիս բարեկամ ուսուցիչը իմ իսկ ձեռքով արձակուեցաւ և ես խուլ մնացի բոլոր անձնական բարեկամներիս թախանձանքին:

Քայց, պարոններ, ես մարդ եմ իրրեւ զձեզ ու սխալանքների ենթակայ. ես կընամ սխալուիլ ու անգիտակցաբար անարդար գործ բռնել, որ հետեանք կլինի նախ՝ ձեզ լաւ չճանաչելու և երկրորդ՝ կարող է լինել, որ դուք իսկ մոլորեցնէք: Հա-

ւատացէք, որ ես կաշխատեմ իմ սխալս ուղղել, եթէ համոզուիմ նորանում, ինքս ինձ պատժելով և մոլորեցնողին պատժելով:

Այսպիսի սխալ կարող է պատահել զիցուք հէնց առաջին քայլում դասերի բաշխման մէջ. եթէ ես մի վայրկեան հոմոզուած լինէի թէ բոլոր ուսուցիչներդ ինքներդ կարող կլինէիք ձեր մէջ բաժնել դասերը և ամէնքդ էլ գոհ լինել ճշմարիտ բարեկամի նման միմեանց զիջումն անելով և ջանալով հաճոյք պատճառել միմեանց, հաւատացէք որ ձեզ կյանձնէի դասերի բաշխումը: Բայց որովհետեւ իմ ասած բարեկամութիւնը առայժմ միայն իդէալ կարող է համարուիլ հայ ուսուցչի համար, մի նեղանաք խնդրեմ, ուստի և ինքս եմ բաժանել: Բաշխման մէջ ինձ առաջնորդող ընդհանուր սկզբունքն է եղել ուսման աստիճանը, ցենզը: Պարոններ, ես պարտաւոր եմ այս սկզբունքին հետեւելու, թէև համոզուած եմ, որ կպատահին սակաւ պաշարով կամ բարձր դիպլոմներից զուրկ մարդիկ, որոնք իրենց փորձառութեամբ և բարեխղճութեամբ շատ աւելի արդիւնաւոր են քան միւսները. բայց այս բանը միայն մօտիկ ապագան կպարզէ ինձ համար, ուստի մինչ այդ իմ սխալս, եթէ արած եմ, ներելի է: Բացի դրանից, որովհետեւ այս խորհրդաւոր ժամին ամենքդ ինձ համար հաւասար սիրելի էք, ուստի պիտի ասեմ թէ ոմանք, որ ինձ անծանօթ են եղել իսպառ, նախապէս ոչինչ չխնդրեցին առանձին դասերի բաշխման նկատմամբ, շփոտեմ վստահ չէին իմ արդարասիրութեան վերայ թէ առաւել զիջող են, ուստի և ընդունակ մտնելու տեսչի դրութեան մէջ ու յարմարուելու. նոքա որոնք ինձ հետ ծառայած են և ինձ լաւ գիտեն, նոքա անմուռնչ գառան նման կեցան և բերան չբացին իրենց ուզած առարկաները խնդրելու. երբեմն եկեղեցական պատմութեան և հայոց պատմութեան ուսուցիչնայժմ զեղազրութիւն պիտի դաս տայ կամ զծագրութիւն, վասն զի վստահ են թէ ի հարկէ ստիպեալ եմ անում այդպէս: Եղան էլ ոմանք, որոնք խնդրեցին այս ինչ առարկաներն իրենց թողնել. քիչ բացառութեամբ ես յօժարեցայ, վասն զի վստահութիւն ներշնչեցին ինձ թէ ըստ ամենայնի բաւարարութիւն կտան դպրանոցին. իսկ իմ վերջնական նպատակս այդ է. ես հսկելու ժամանակ էլ ունիմ և փոքր

ինչ էլ շնորհք. կարճ միջոցում ինքնապաստանութեան մէջէն ճշմարտութիւնը կը գտուի և իմ առջև կարձանանայ.

Այս ամենից յետոյ խնդրում եմ ձեզ չգոգոհիլ ձեր բաժնով, խորթութեան աչքով չնայել ընկերին և անմեղադիր լինել առ Տեսուչն, որի առաջ ժամանակը շատ բան կը բանայ և սխալներն ուղղելու հնարաւորութիւն կտայ եթէ կան ի հարկէ:

Ես փոքր ինչ շեղուեցայ ուղիղ գծից. այժմ շեշտելու եմ ուսուցչաց պարտքերն առ հոգաբարձութիւն և սրբազան առաջնորդն: Պարոններ, իմ կեանքիս փորձերից գիտեմ, որ յաճախ ուսուցչաց և հոգաբարձուաց մէջ մի անգունդ է եղել. հոգաբարձուները նայել են ուսուցչի վերայ իբրև վարձկան մշակի, որի աչքը դէպի իրենց՝ հոգաբարձուների ձեռքն է անկած, ուստի և զլացել են յարգանք տալ նորան. ցաւալի է այս ի հարկէ, բայց ես չեմ կարող մեղադրել հոգաբարձուին: Ես այդ կրացատրեմ. ուսուցիչներն էլ յօգնութիւն կոչելով իրենց ուսումը, արհամարհում են շատ անգամ հոգաբարձուին, որ չէ ուսած, զլանում են նորան պատշաճաւոր յարգանքը տալ և այսպիսով յառաջանում է մի անտեղի սառնութիւն: Պարոններ, այս ոչ ցանկալի յարաբերութեան պատճառը հոգաբարձուները չեն եղել այլ գրեթէ միշտ ուսուցիչները: Ճշմարիտ կրթուած ուսուցիչը պարտաւոր է հեղ լինել, իսկ հեղութիւնը չի արհամարհում ոչ մի դասակարգի մարդու. երկրորդ ճշմարիտ կրթուած ուսուցիչը պիտի յաւ ըմբռնէ թէ միայն ուսում առնելը դեռ չէ առաքինութիւն. մարդ կարող է անուս լինել և շատ առաքինի, վաստակաւոր, օգտակար ուրեմն և ամենայն յարգանքի արժանի տգէտի և գիտունի կողմից: Երրորդ՝ որքան և ուսումն առած վարժապետը «յօդս ելանիցէ» այնուամենայնիւ նա ապարդիւն կրլինի իւր սիրած գործի մէջ առանց անտեսական բարեք վիճակի: Այս վերջինը հոգաբարձուներից կախեալ է, ապա և ուրեմն այստեղ աշխատանքի հաւասար բաժանումը կայ, ուսուցիչը իւր անձով, հոգաբարձուն իւր վաստակած դրամով հաւասարապէս անհրաժեշտ են և ս. գործի համար, ապա ուրեմն հաւասարապէս փոխադարձ յարգանքի արժանի:

Բաց յայդմանէ հոգաբարձուն իբրև ժողովրդի մի անդամ

սովորաբար բարձր գաղափար ունի ուսուցչի մասին և երբ տեսնում է ուսուցչին շողորորթելիս, արծաթի գնով իւր պատիւը վաճառելիս, թղթախաղով սղեորուելիս, խռովութիւն սերմանելիս, հաստատութեան ներդաշնակութիւնը պառակտելիս, նսեմանում է ուսուցիչը նրա աչքում, ինքդինք խտրուած է համարում և զլանում է արժանավայել յարգանքը տալու ուսուցչին:

Ուսուցչութիւնը բարձր պահող ուսուցիչը բարոյական ոյժ է, իսկ այդ ոյժի առաջ ոչ միայն հոգաբարձուն, այլ աշխարհի ընտիր բաժինն ու զօրաւորներն են խոնարհում: Ուստի յորդորում եմ ձեզ սիրով և յարգանօք վերաբերուել առ մեր այժմեան հոգաբարձութիւնը, որ ընտիր անձերից և բարի հոգիներից է կազմուած. սուտ ու սխալ տեղեկութիւններով չշփոթել պատուարժան հոգաբարձութեան, ազեղ դեր չխաղալ հոգաբարձութեան և պաշտօնական միւս պարոնների մէջ, որ և ուսուցչի ազնուութիւնն է:

Այսքանից յետոյ ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ որպիսի երախտագիտական բուռն զգացմունք պիտի տածենք ամենքս առ սրբազան առաջնորդը, որ Հայոց սրբազնագոյն Հայրապետի փոխանորդն է, դպրանոցիս հովանաւորը և ամենքիս հայրը:

Մի վերջին հանգամանք էլ շեշտելով, ես կիսակեմ իմ խօսքս. պարոններ, ամեն ընտանիք իւր գաղտնիքն ունի, որ նուիրական է, որ հրապարակի վերայ չի ձգուի. իւր ընտանեկան գաղտնիք չպահող մարդը զուրկ է պատուի զգացումից ու ինքն ըստ ինքեան վաւերացում է այն կարծիքը, թէ նորան կարելի չէ որ և է ընկերութեան մէջ ընդունել: Գպրանոցի մէջ մենք բոլորս դպրանոցական ընտանիք ենք կազմում, ուստի և մեր ընտանեկան գաղտնիքը, ժողովների գաղտնիքը միայն մեր շրջանում պիտի մնայ: Բարոյապէս ոչ ոք իրաւունք չունի մեր գաղտնիքն իր եղբօրը, իւր լաւ ընկերին, իւր ամուսնուն կամ գաւակին ասելու, վասն զի մեր դպրանոցական գաղտնիք չյարգողը ամաբղի կլինի, չէ որ մենք իրաւունք չունինք ձեր ընտանեկան գաղտնիքն իմանալու պահանջն անել: Ի՞նչ կասէք դուք, եթէ ձեր խոտովանահայր քահանան ձեր գաղտնիքը հուշակէր. չէ որ ամեն

մէկդ խոստովանահայր քահանայ էք մեր դպրանոցական ընտանիքում:

Ես իմ խօսքս սրանով վերջացնում եմ ու հրաւիրում եմ ձեզ թախանձելով որ միանաք և բարձր մնաք. մեր ամենուս ստորագրութեամբ կնքենք այս ամենը, որոնք ուսուցչութեան պայմաններն են և թող այդ կնիքը մեր սրբազան ուխտի կնիքը լինի: Վստահ եղէք որ քանի այդ կնիքը քանդող չի եղել, մեր խումբը երբէք չի քանդուի և մենք միշտ անբաժան և սիրով երկար ժամանակ կըծառայենք այն բարձր լիոջման, յոր կոչեցաք: Վստահ եղէք թէ Դուք իմ հրաւիրած ուսուցիչներն էք, իսկ իմ սիրած գործին ծառայելու հրաւիրած իս վերայ իմ անձս դնելու միշտ տրամադիր եմ: Հազար երանի եթէ ոչ մէկդ առիթ չտար ցաւօք սրտի հեռացնել իրեն դպրանոցից և թէ ինձ ու դպրանոցին վիշտ չհասցնէք:

Տեսուչ դպրանոցի

Բենիկ վարդապետ

Յ. Պապովեան

Ս. Գիւլզադեանց

Պ. Քուչմանեանց

Մ. Տէր Սահակեանց

Հ. Աբովեանց

Գ. Ղուլիքեան

Ա. Տէր Ոսկանեան

Կ. Թիւնիբէկեան

Ա. Զիլինկարեան

Ա. Թարխանեան

Ա. Տէր Միքէլեան

Ք. Փիրջանեան

Հ. Յովակիմեան

Լ. Աղախանեան

Թէև այս արձանագրութիւնը ոգևորութեամբ և սիրով ստորագրուեցաւ, բայց և այնպէս ոչ ամէնքը հաւատարիմ մնացին իրենց ուխտին, եղան ոմանք «զորս խարբալեաց սատանայ» բայց համբերութեամբ զինուելով տոկացի...:

Թ Ի Ի Ա Ղ Ա Կ Ե Ր Տ Ա Յ.

| Ըստ դաս. | Քան. | Նա հանդ | Քանի | Գ ա լ ա ս | Քանի | Ստոր. | Ցուն. | Մայիս | վերաբ. նորեկ. սեպտեմբ. | | |
|---------------|------|--------------|------|-------------|------|-------------|-------|-------|------------------------|--|-----|
| Ա. Հիմն. պատ. | 57 | I Գանձակ | 582 | Ջուշի | 515 | | | | | | |
| Ա. Ջուզ. » | 57 | | | Ջանդեղուր | 45 | | | | | | |
| Բ. Հիմն. » | 52 | | | Ջուանշիր | 13 | | | | | | |
| Բ. I Ջուզ. » | 54 | | | Ջիրբայէլ | 4 | | | | | | |
| Բ. II Ջուզ. » | 53 | | | Նուխի | 2 | | | | | | |
| Գ. Հիմն. » | 64 | | | Գանձակ | 3 | | | | | | |
| Գ. Ջուզ. » | 65 | | | | | | 588 | | | | |
| Ա. Հիմն. դաս. | 39 | | | II Երևան | 2 | Նախիջևան | 1 | 568 | | | |
| Ա. Ջուզ. » | 39 | | | | | Ալեքսանդրպ. | 1 | 568 | | | |
| Բ. դաս. | 42 | | | | | | | | 555 | | 154 |
| Գ. » | 30 | III Բազու | 4 | Բազու | 4 | | | | 153 | | |
| Գ. » | 12 | | | | | | | | | | |
| Ե. » | 12 | | | | | | | | | | |
| Ջ. » | 12 | | | | | | | | | | |

Թ Ի Ի Ա Ղ Ա Կ Ե Ր Տ Ա Յ Ը Ս Տ Գ Ե Ր Ը Պ Մ Ը Ն Ե Ն Ո Ղ Ա Ց Ե Ի Ը Ս Տ Տ Ա Ր Ե Կ Ը Ն Թ Ո Ղ Ա Կ Ը Ց

| Հոգևորական. որդիք | Ազնուականների | Երկրագործների | Աստիճանատուների | Վաճառականների | Արհեստագործների | Ուսուցիչների | Կալուսածատելիքի | Մշակների | Հ ս գ ու լ | Ո ր ր ե ր | 15 ո. վճարողներ | 10 ո. վճար. | 8 ո. վճար. | Որրեկերներ, 15 ո. | 7 1/2 ո. վճար. | 5 ո. վճար. | 2 վճարողներ | 2 ր ի ն ե ր | Թոշակի գումարը |
|-------------------|---------------|---------------|-----------------|---------------|-----------------|--------------|-----------------|----------|------------|-----------|-----------------|-------------|------------|-------------------|----------------|------------|-------------|-------------|----------------|
| 40 | 4 | 58 | 11 | 134 | 221 | 1 | 3 | 57 | 2 | 67 | 193 | 139 | 1 | 68 | 12 | 27 | 8 | 110 | 5475 |

Այս տախտակից պարզ երևում է թէ դպրանոցի աշակերտութիւնը բացառապէս աղքատ դասի զաւակներն են. ի նկատի պէտք է ունենայ որ այստեղ յիշուած վաճառականների, ազնուականների մեծ մասը կարողաւոր տեսակիցը չեն. այլապէս կհետեւէին իրենց հարուստ վիճակակիցներին և իրենց որդիներին հայոց հոգևոր դպրանոց չէին տայ. չէ որ դպրանոցը հարստութիւն չի տալիս իւր սաներին. իսկ եկեղեցու և ազգի պահանջները

համար թող սովորեն աղքատները: Աղքատ դպրանոցի աղքատ սաների տուած թոշակը եկամտի մի խոշոր աղբիւրն է: Առաւել շատ աշակերտներ գրաւելու դէպի ազգային վարժարանը, աղքատ դասակարգից և միևնոյն ժամանակ միջոց տալու դպրանոցին որ կառավարել կարողանայ, մերկ արողաւոր ազգայիններից ոմանք մի շատ գեղեցիկ բարոյական պարտք են յանձն առել, այն է մշտական թոշակաւոր որդեգիրներ պահել դպրանոցումս տալով նոցա տարեկան ուսման վճարը այն է 15 բուբլի իւրաքանչիւրին: Այդ հայրագիր բարերարների մէջ անշուշտ առանձին տեղն է բռնում դպրանոցիս հոգաբարձու մեծ. Իսահակ Թադէ-ոսեան, որ պահում է 50 որդեգիր. ապա պ. պ. Միրզայ և Սիմէօն Առափելեանները 8. Պ. Տիգրան Նալբանդեան 2. պ. Սիմէօն Զիւեան 1. պ. Սարգիս Կրասիլնիկեան 3. պ. Աղաջան Ժամհարեան 3. պ. Յովհաննէս Խունունց 1: Որդեգիրների թիւն է ընդամէնն 68: Որդեգիրների ընտրութիւնն անում է մանկավարժական ժողովը աղքատ, ընդունակ և բարոյական սաներից. Մեծ. պ. Աւագ Մանուչարեանը խոստացել է մշտական 10 որդեգիր պահել առաջիկայ սեպտեմբերից, պ. Քրիստափոր Գալստեան 1 իւր բարեյիշատակ հօր անունով. պ. պ. Անդրէաս և Իսաջան Թիւնի-բէկեան եղբայրները այնքան, որքան տոկոս կ'ըբերէ իրենց նուիրած 5000 բուբլին. նոցա որդեգիրները իրենց բարեյիշատակ եղբօր Բարաբէկ Թիւնիբէկեանի անունով կ'իւղուին:

Այս գեղեցիկ սովորութիւնը եթէ հետևողներ ունենայ և որդեգիրների թիւը գէթ 200-ի հասնի, շատ աղքատ մանուկներ ուսում կառնեն, ապագայ մուրացիկանների և թշուառների թիւը կ'պակասի, շատ ծնողներ թեթևութիւն կ'ըզան և վերջապէս հայ եկեղեցին պատրաստի քահանաներ կունենայ, իսկ ժողովուրդը մխիթարիչ հովիւներ, ահա բարեգործութեան այն տեսակը, որ յիշուած է ս. աւետարանի մէջ ճշմարիտ քրիստոնէի համար: Տանք մեր շնորհակալութիւնը աղքատ մանուկների բարերարներին և սպասենք նոր բարերարների:

Այն հանգամանքը որ դպրանոցի աշակերտները բացառապէս աղքատ դասի (աշակերտ) զաւակներն են և զաւառացիք, բացասական ազդեցութիւն է գործում աշակերտաց ընդհանուր

յառաջագիմուժեան և բարոյականութեան վերայ: Հարուստ դասի զաւակները մանկութիւնից սովորում են մաքրութեան, կարգաւորութեան, բարեկիրթ ձևերի, մարդկային վայելուչ յարաբերութեան, ենթակայ են ծնողների հսկողութեան ևն. ընական է որ նոքա այս բարեմասնութիւնները իրենց հետ դպրոց են տանում և չեն դժուարացնում հսկողութեան և դաստիարակութեան գործը. բայց մի մուսնաք որ սոքա հոգևոր դպրանոց չեն մտնում: Բացի դրանցից նոքա ունին տաք և մաքուր ընկարան, անկողին, բաւարար սնունդ, վայելուչ հագուստ, դասադիրք, ուսումնական բոլոր պիտոյքները: Իսկ ինչ է դպրանոցի աշակերտը, եթէ քաղաքացի, մեծ մասով այնպիսի ընտանիքներից, ուր մաքրութեան, կարգապահութեան, բարեվայելութեան մասին գաղափար չկայ. մեր տեղեկութիւններից երևում է որ նոյն իսկ շատերի տներում բարոյականութեան մասին էլ գաղափարը չատ թոյլ է և աշակերտը հանդիսատես է միանգամայն վնասակար օրինակների, առանց հսկողութեան: Ահա թէ բարոյական որպիսի սնունդ է ստանում այն աշակերտը, որ հոգևոր դպրանոցի բաժինն է ընկնում: Բացի դրանցից զոցանից շատերը կուշա փորով հաց չեն ուտում, շունին գիրք, վառելու ճրագ, հագուստ, բորիկ էին ձմեռը, մարմինները ցնցոտիներից դուրս ցցուած դողողջուն ու թշուառ. այս ճոխ քաղաքում գէթ երկու ծայրայեղ աղքատութեան օրինակ տեսէք. կայ ծնող որ միայն մուրում է և դորանով իւր զաւակին պահում և ուսում տալիս. կայ աշակերտ որ ձմեռան ձիւնախառն ցեխ օրերում տախտակի երկու կողմից ծակեր շինում թեւ անցկացնում ու կացում ոտքի տակ. իսկ միւս ոտքին հարստի աղբանոցից գտած մի մեծ ցնցոտի կրկնակօշիկ: Աւելացրէք սորա վերայ և այս, որ գաւառացիք ծնողների աչքից հեռու են, շատ անգամ միասին են ապրում, խմբուում են այստեղ այնտեղ և ընդունակ են իրենց թշուառութեան հետ միացնել և այնպիսի թերութիւններ, որոնք քաղաքի բղխումն են: Այսպիսի աշակերտները կանգնեցնում են իրենց գասարանների յառաջագիմուժիւնը, աղբում են բարեկիրթ աղայոց սրտի վերայ. և ինչ որ դպրոցը շինում է սոցա սրտերի մէջ, աղքատութիւնն ու տան տպաւո-

ըութիւնը քանդում են: Ահա թէ ինչ աշակերտներ է տալիս դպրանոցին հայոց ժողովուրդը. հրամեցէք, մանկավարժներ, դաստիարակեցէք, ուսումն տուէք այս աշակերտներին և կարճ ժամանակում, մի երկու ամսում, մի տարում փիլիսոփաներ, հայկաբաններ պատրաստեցէք. բայց մի մոռանաք, որ շատ ծնողներ իրենց ամբողջ կեանքում իրենց զուակի մէջ բուն դրած մի վատ հակումն շտկել չեն կարողանում և անմխիթար գերեզման են իջնում:

Բայց հայ վարժապետը չի լքանում, հանդարտ ու անձնուէր սիրով ճգնում է կրթել իւր սանիկին և մինչդեռ շատ տեղերում մանուկ բարեկիրթները անբարեկիրթ երիտասարդներ են դառնում, հայ վարժարանի սանը աւարտելիս քիչ բացառութեամբ գոնէ մաքուր բարոյականով է երևում իւր ժողովրդի մէջ. իմ ասածս չափազանցութիւն չէ. խնդրում եմ ուշադրութեամբ ձեր շուրջը նայէք:

Դպրանոցիս աշակերտաց մէջ յաճախ երևացող բարոյական թերութիւններն եղել են կրկնակօշիկների գողութիւն, որ մասամբ կարօտութեան բայց և մասամբ քաղաքի ազդեցութեան արդիւնքն է, որովհետև և՛ եկեղեցիներում և՛ տներում կրկնակօշիկ են գողանում, ապա ուսումնական պիտոյքների գողութիւն, հայհոյանք, խաբէութիւն, տգեղ բնագոյներ և այլն: Դրպրոցական վարչութիւնը երկու կերպ է մաքառել այդ թերութեանց դէմ. վարչական միջոցներով և դաստիարակութեամբ. վերջնովս դիմել է կենդանի խօսքի և համոզելու ոյժին, ներողամիտ է եղել, դիմել ծնողների օգնութեան. նկատողութեանց համար սահմանուած մատեանումն է գրուել, որ ուրիշներն էլ իմանան և հսկեն: Եթէ դաստիարակութիւնը իւր միջոցներն սպառել է և անզօր գտնուել, այն ժամանակ գործը յանձնել է վարչական բաժնին, որը նախ նկատողութիւն է արել, ապա հետզհետէ խստացնելով մանկավարժական պատիժներ է տուել և երբ սա էլ անզօր է գտնուել ստիպուել է արձակման խնդիր դնել մանկավարժական ժողովում: Ոչ մի արձակումն առանց մանկավարժական ժողովի եղած չէ: Կան մարդիկ որոնք իրենց յատուկ եղանակով մեղադրում են վարչութեանց աշա-

կերտներ արձակելու համար, ասելով որ աշակերտը միշտ կարող է ուղղուել. մի փոքր կանգ առնենք այստեղ և ցոյց տանք թէ կարճամիտներն են այդպէս մտածում: Կան այնպիսի ժառանգական թերութիւններ, որոնց արմատախիլ անելը անհնարին է դառնում. չ'գիտէք դուք այնպիսի մարդիկ, որոնք մինչև գերեզման որևէ թերութեան մէջ անուղղայ են մնում: 2^է որ ճշմարտութիւն է դարաւոր փորձից հանած ասածը թէ «Սապատողին գերեզմանը կ'շտկէ»: Այդպիսի բնական վատ հակումն ունեցող աշակերտներ են լինում, վատահոգի, ապերախտ, որոնց ուղղելն անհնարին է դառնում որսնց և շատ փորձերից յետոյ արձակում ենք. Այսպիսիների թիւը ի հարկէ քիչ է. մեծ մասին ուղղել կարելի է, այդ յոյսերով էլ աշխատում ենք ուղղել և ուղղում են: Չատ անգամ դիցուք հաւատում ես թէ այսօրուայ Ա. դասարանի վատասիրտ աշակերտը կտրոզ է ուղղուել դիցուք Գ. դասարանում. դաստիարակը համբերութիւն ունի տոկալու, բայց հասկանալ պէտք է, որ երեք տարուայ ընթացքում մինչև վատը ուղղուի գէթ մի երեսունի կ'վատացնէ. արդ, շարիքից ո՞րն ընտրենք, երեսունին փշացնելը թէ մէկին արձակելը: Այս ձմեռ եղան ծնողներ, որոնք պահանջեցին մեզնից դուրս անել վատ աշակերտներին, որովհետև իւրեանց որդին էլ նոցա չըջանում փշանում է: Եւ միթէ կարծում էք թէ հեշտութեամբ ենք աշակերտ արձակում. ես տեսայ ուսուցիչ, որ անուղղայ աշակերտի և արձակուածի հետ կանգնած լալիս էր հարազատի սրտացաւութեամբ. այդ արցունքների վկան Աստուածն է միայն: Ահա թէ երբ ենք աշակերտ արձակում և ինչու:

Մի նկատողութիւն ևս բարքերի մասին. աշակերտները յիշատակարաններ ունին, ուր երկու ամիսը մի անգամ յառաջադիմութեան թուեր են գրուում, վարք և նկատողութիւններ են գրուում ծնողների համար: 2^է որ ծնողները կարգում են. ինչո՞ւ չեն ուղղում աշակերտաց թերին. չեն սիրում իրենց զաւակներին. ո՞չ, շատ անգամ չեն կարողանում:

Խօսքս ուղղում եմ դպրոցական կարգապահութեան վերայ: Խորապէս համոզուած ենք թէ որևէ կրթական հաստատութեան բարոյական և մտաւոր յառաջադիմութիւնը խաղաղութեան հողի

վերայ կարող է աճել, իսկ այդ հողը դպրոցական կարգապահութեամբ է մշակուում: Թէ որպիսի կարգապահութեան ոգի է բաժին հասել ինձ աշակերտների մէջ, ձեր անցեալ տարուայ հոգաբարձական աղմկայոյզ ընտրութիւններից յետոյ, որի մէջ ցաւօք սրտի չար միտումներով հրաբուրուել ու մասնակցել են աշակերտները, դպրանոցի ուսուցչական խմբի արձակումից յետոյ, երբ աշակերտներն առանց հսկողութեան տարուել են միայն այլոց անխոհեմ զգացմունքներով, այս մասին ես լուում եմ: Կասեմ միայն որ մի աշակերտութիւն տեսայ, որ կարգապահութիւնից շատ հեռու էր. աշխատասիրութիւն, ճշտապահութիւն, հաւասարութիւն, բարեկիրթ լեզու և ձևեր, հնազանդութիւն, երախտագիտութիւն, որոնք աշակերտական անդրանիկ պարտքերն են, կարծես թէ իսպառ անծանօթ էին: Այս թերութիւնների դէմ սկսել ենք մաքառել կենդանի խօսքով, դիտակցութիւնների վերայ աղղելով, ծնողներով, ընթերցանութեամբ ևլն: Սակայն մեր ջանքերին մի հակազդեցիկ ոյժ քանդում էր մեր տանջանքով շինածը. մեր պատուական ժողովրդի մէջ գանուեցան մի քանի անհատներ, որոնք չգիտեմ ինչու հաւաքում էին աշակերտներին, որոտընդոստ ճառերով և պատանեկան անփորձութեամբ ատելութիւն զարթեցնում դէպի դպրանոցի վարչութիւնը, ապերախտութեան առատ բաժին հանում իրանց սրտից նոցա համար և այլն և այլն: Իրենց աննպատակ նպատակին հասնելու համար հաւաքումների մէջ մերթ ընդ մերթ հրաւիրում էին և օրիորդներ: Պարոններ, անքուն գիշերներ, պատանեկան խառնուածք ու երերուն զգացմունքներ, հոգմալար կամք, սէք, գինի և այլն, երևակայեցէք թէ ինչպէս կազդէին աշակերտաց կարգապահութեան, մտաւոր յառաջադիմութեան և բարոյականի վերայ. ամէն բան լաւ է իւր ժամանակին, բայց ամէն բան աւերիչ՝ անժամանակ և իմ աշակերտների սիրտը անժամանակ աւերուում էր. և գիշերուան խաղաղ պահուն, երբ աշակերտի ծնողը կարծելով թէ իւր որդին ընկերի տանը դաս է սովորում և հանգիստ քնած էր, մենք անքուն գիշերով մաշուում, հիւժուում էինք, գիտենալով թէ ո՞ր է տանում աշակերտներին այս կորստական ճանապարհը: Տղայական

այդ ջանքերը ձևաւորուեցան մի խնդրով առ տեսուչն, որի մէջ զանազան պահանջներ էին անում, պահանջներ որ կարգապահութեան հիմքն էին քանդում, որ անիշխանականութեան է հասցնում: Այդ պահանջները զլիսաւորապէս պտոյտ էին գալիս երկու ուսուցչի շուրջ. աշակերտները այդ երկուսի արձակումն էին պահանջում: Զատ խօսեցայ, շատ համոզեցի, սիրելիք ձեր ասածները ի նկատի կառնուին, եթէ արդար են, միայն զրով մի տար, որ մանկավարժական խորհրդին յանձնուի: Չլսեցին. շորս հոգի պարագլուխներն, որոնք և ուրիշ շատ յանցանքներ ունէին, մանկավարժական ժողովի միաձայն վճռով և հոգաբարձական ժողովի միաձայն հաւանութեամբ արձակուեցան: Հետևեալ օրն իսկ մնացեալները մեղայական գրերով խնդրեցին ներողամիտ լինել դէպի իրենց արած մեծ սխալանքը: Երկիցս երկցս մեղայական տուին նաև արձակուածները, բայց ժողովը հին հին փաստերից խրատուելով անդրդուելի մնաց: Արձակուածները խաղաղութեամբ գնացին. ամէն ինչ խաղաղ էր և ոչ մի վայրկեան դատերի և դպրոցի վերայ չադդեց այս տղայութիւնը: Անցաւ մի քանի օր աշակերտներից շատերը յայտնում էին իրենց ուրախութիւնը, որ պարագլուխներն արձակուեցան, որոնք իրենց խաբում, սպառնում, ստիպում էին չ'հասկացած բաներ խօսել, ու չկարգացած թուղթ ստորագրել. այս դեռ ոչինչ, նոյն աշակերտները ոգևորուելով բողոքի առարկայ ուսուցչի դասախօսութեամբ ծափահարում են դատարանում, մի բան որ արգելուած է, նոյն ուսուցչի հետ զբօսանքներ կատարելու, նկարուելու թոյլտուութիւն են խնդրում և այլն և այլն: Երևակայեցէք, ի՞նչ, շատ բան և մտէք տեսչի դրութեան մէջ:

Անկարգների արձակումից յետոյ կարգապահութիւնը շատ արագ կերպով բարձրացաւ. որի բարերար ազդեցութիւնը պայծառութեամբ երևաց մտաւորի և բարոյականի վերայ: Ուսուցիչներից շատերը, որ վկայ են եղել և անցեալին, մեծ փոփոխութիւն էին նկատում: Մինչև վերին դատարանները ես մեծ փոփոխութիւն տեսայ և մխիթարուած եմ. իսկ վերինների մէջ եզան տղաներ, որոնց ուղղելու յոյսն է մնացել. և այդ շատ պարզ է. թէք մեծացած և փետացած ծառը հեշտութեամբ

չի շտկուի: Բնական է որ այդպիսիները պիտի տրտունջ ունենային մեր դէմ. բայց հաւատում եմ անդրդուելի հաստատամտութեամբ, որ եթէ ոչ դպրոցում, գոնէ կեանքում երբ կատարեալ գիտակցութեան հասնին դոքա, պիտի հասկանան մեր խստութեան իմաստը, որի մէջ մեր սէրն է փայլում և ոչ մի անձնական հաշիւ:

Արձակուածների համար Վեհափառ Հայրապետի Գիւանից պահանջուեցաւ բացատրել և ուսման վկայագիր տալ. Սրբազան առաջնորդի միջոցով գոհացրինք Նորին Սրբութեան, աւելնք վկայագրեր հաւատարիմ մնալով մանկավարժական խորհրդի վճռին, այսինքն որ նոքա արձակում են անուղղայ վարուց համար: Երևանի դպրանոցը ընդունեց արձակուածներին և ուրախ ենք. գուցէ այնտեղ ուղղուեցան իսկոյն և սիրելի դարձան:

Աշակերտների ոմանց կարգապահութեան վերայ վատ են ազդել նոյնիսկ աշակերտների ծնողները. եղել են այսպիսի օրինակներ. դաստիարակը կամ ուսուցիչը կամ վերակացուն, որեւէ պատուէր են տալիս աշակերտին. աշակերտը գնում է տուն, իսկ ծնողը կամ հարազատներից մէկը պատուիրում է որ բանի տեղ չդնի վարժապետի ասածը. կամ թէ չէ պտտժուում է մի աշակերտ իւր անկարգութեան համար, գալիս է մայրը տղայի ձեռքից բռնած կռիւ անելու վարժապետների հետ. վահ, ոնց կ'արող է իւր անսխալ որդին սխալ բան անել: Բայց այսպէս չէին վարուի եթէ հայոց դպրոց չ'լինէր. հապա համարձակուեցէք պետական դպրոցներում այդպէս վարուել: Բայց մենք կրում ենք և այդ վիրաւորանքները. հրամեցէք, վարիչներ, կարգապահութիւնը ուժովացրէք: Գարգապահութեան, մտաւոր յառաջադիմութեան և բարոյականին նպաստաւոր լինելու համար մի ընտիր միջոց ենք համարել ընթերցանութիւնը: Ով որ մեղինց առաւել լաւ գիտէ թէ ի՞նչ է մանկական, աշակերտական հոգին և ինչ կրթութիւնը, կ'համոզուի անշուշտ որ անսխտեմ ընթերցանութիւնը ոչ միայն չի օգնում այլև փշացնում է աշակերտներին. աշակերտների գաղափարները մնում են խճճուած, անմարս, անձև և այլանդակ, դժացմունքները սխալ ուղղութիւն ստանում, բնաւորութիւնը այդպիսի ընթերցանութեան ազդեցութեամբ փոփոխական և անկայուն է դառ-

նում: Ահա այդ պատճառով է որ մեր կեանքում կարգացողներ շատ են, շատ գրքերի անուններ բերան արած վիճարանող իմաստակներ անթիւ են, բայց կազմակերպուած վայելուչ, բարոյական բնաւորութիւնները մատով ցոյց տալու միայն: Այդ շարիքից ազատելու համար աշակերտներին մանկավարժական ժողովը որոշեց թէ ինչ գրքեր պէտք է կարդան աշակերտները. գրքերի ցանկը կազմելիս ինկատի ենք ունեցել աշակերտների տարիքը, դասարանը, պաշարը և աւանդուող առարկաները, որոնց լուսաբանել կարողանային ընթերցանելի գրքերը և ուսածն ամբասնդէին: Սակայն ընթերցանութեան գործում մենք մեր նպատակին չ'հասանք. նախ որ գրագարանը շատ աղքատ է, եղածովն էլ պարտական ենք ժամհարեան եղբայրներին, երկրորդ որ աշակերտները միանգամ վարժ լինելով թեթեւ ընթերցանութեանը, չկարողացան ուղեղի լարումով լուրջ գրքեր կարդալ. երրորդ որ գրսից մօզնի գրքեր էին ստանում ու կարդում: Չնայելով այդ բանին աշակերտները բաւական թուով գիրք են կարդացել, որի մասին կ'իշխեմ երբ գրագարանի մասին խօսք լինի:

Դաստիարակութեան համար մեծ նշանակութիւն ունին դպրոցական հանդէսներն և աշակերտական գրական երեկոյթներն ու ցերեկոյթները: Դպրոցական հանդէսները Սրբոց և առաքինի հերոսների յիշատակի հետ է կապուած. այդ հանդէսներում պատմուում են նոցա կեանքը, նկարագրուում նոցա առաքինութիւնները, յառաջ բերում նոցա թողած բարոյական արդիւնքը. ուրիշ խօսքով սրբոց տօները առաքինութեան տօն է. աշակերտների առջև իբրև առաքինութեանց մարմնացումն է հանդէս բերուում սուրբը, պայծառանում իբրև կենդանի և ոգևորող օրինակ մատաղ մարդուն: Մէջ ընդմէջ կարդացուում են և արտասանուում են ոտանաւոր, երգուում երգեր, որոնք իրենց իմաստով կապուում են հանդիսի առաջնորդող գաղափարի հետ: Քացի այդ աշակերտները ամենուն սեփական ու սիրելի յիշատակների շուրջը խմբուելով կապուում են նոցա հետ, կապուում իրար հետ, իսկ ժողովրդի ներկայութիւնը առաւել ևս քաջալերում է նոցա սիրել այդ յիշատակներ, այդ

գաղափարներ, միմեանց: Ահա թէ ինչ նպատակով ենք կատարում սրբոց յիշատակին նուիրուած հանդէսները: Գրական երեկոյթներն ու ցերեկոյթները փոքր ինչ տարբեր բնաւորութիւն ունին: Այդ հանդէսներով մենք կամեցել ենք մեր աշակերտներին ցոյց տալ ու սիրելի կացուցանել մեր ժողովրդի մտքի և զգացմունքի բանահիւտական արդիւնքերը. երգը, նուագը, վիշտն ու խինդը, լեզուն, մէկ խօսքով կամեցել ենք որ մեր սաները մեր ժողովրդի զգացմունքներով ապրեն, նոցա պէս լան, նոցա պէս խնդան, նոցա պէս ու նոցա լեզուով երգեն: Այս իսկ պատճառով գրական հանդէսներում մեծ տեղ են բռնել ժողովրդական բանահիւտութիւնը, երգը, պարը: Մարդ պէտք է տկարամիտ լինի որ չհասկանայ թէ ժողովուրդը զգացմունքով է պահում իւր բարոյական գոյութիւնը, իսկ այդ զգացմունքի լեզուն նորա երգն է: Այս գործում շատ ենք պարտական ուսուցիչ պէտքայկ Յովհաննիսեանին, որ մանուկ սաների բերնով հայ աշուղութիւն է տարածում. և որքան քաղցր է մեզ համար, որքան յուզիչ երբ պարսկական աման-ամանի հետ մէկ տեղ լուսնակ գիշերով մեր սաների զիւ ձայնն է համնում մեր ականջին. «Մարերաց պէտ պէտ քեարեր թող գեօգեօգան խետ մեր ձէնուն, երկնուց պայծառ աստղեր թող փայփլյան վըր մեր գըլխուն» ևլն: Ո՞ր օպերան կարող է ինձ համար այնքան սիրելի լինել քան այն մատաղ ձայնը որ դարերու ծոցումն հանդչող հայ ժողովրդի հեկեկանքն է:

Սուրա հետ մէկտեղ գրական հանդէսներին աշակերտներին կամեցել ենք վարժեցնել ինքնուրոյն աշխատութեանց, տալով նոցա ճառերի խնդիր մշակելու, գրքերից օգտուելու կն. միևնոյն ժամանակ հասարակութեան առջև դուրս բերելով կամեցել ենք նոցա վարժեցնել համարձակութեան, քաջալերել ենք նոցա բնութենականութիւնները ևլն:

Տարուայ ընթացքում ունեցել ենք եօթն հանդէս. մէկը՝ դպրոցի բացման նախընթաց օրը, ուր կարդացուել է նորին ս. Օծութեան կոնդակը տեսչի հաստատութեան համար և խօսել է տեսուչը իւր և դպրոցական մեծ ընտանիքի անդամների կոչումն ու պարտիքը նախագծելով: Մէկը Վեհափառ Կաթողիկոսի Օծ-

ման տարեգարձի առթիւ, մէկը նոր տարու և Վեհափառ Հայ-
րապետի անուանակոչութեան տօնի առթիւ. ունէր երկու մասն
լուրջ բաժին և զբական-զուարճական բաժին: Մէկ զուտ զբա-
կան առաւօտ և երեք դպրոցական տօներ՝ ս. Թադէոս և Բար-
դուղիմէոս առաքելոց, ս. Գևորգեանց և Վարդանանց և ս. Լու-
սաւորչի յիշատակին: Ունեցել ենք նաև երկու աշակերտական
ներկայացումն աշակերտների զուարճութեան համար բարիկեն-
դանի արձակուրդին: Այս հանդէսների մէջ մասնակցութիւն են
ունեցել 11 ուսուցիչ իրենց ճառերով և առհասարակ հանդէսն
առաջնորդող ատենախօսութիւններով. 53 աշակերտ ինքնուրոյն
ճառերով և հատընտիր ոտանաւորներով հայ և ռուս լեզուով.
120 աշակերտ՝ երգերով և պարերով, 5 անգամ խօսել է տեսու-
չը: Մեզ սգևորել է այստեղ հանդէսների գաղափարը, իսկ աշա-
կերտներին և ժողովրդին հանդէսները, որոց համար ժողովրդի
բերանից միշտ գոհութիւն, շնորհակալութիւն ենք լսել: Սակայն
եղան հատուկտոր մարդիկ, որոնք գուցէ շնորհակալութեամբ
մեր ձեռքը սեղմողներից էին, որ պարբերական մամուլի մէջ
գրեցին, ու մրեցին մեզ, յատկապէս նուսատիս, որ մենք ժո-
ղովրդի առաջ ֆօկուսներ ենք անում, ատենախօսութիւն ենք
անում, շլտցնում ենք ևլն. սորա հետ միացրին և մի այլ մեղա-
դրանք, որ մենք դպրանոցի և աղքատ աշակերտաց համար
նուէրներ կտակօղ հագուցեալների դազաղի վերայ երախտագի-
տական խօսք ենք արտասանում երևի էլի ֆօկուսի համար ևլն:
Երբ չէինք քարոզում կամ մեր առանձնութեան մէջն էինք աշ-
խատում ժողովրդից հեռու, մեզ հայհոյեցին թէ ժողովրդասէր
չենք, ուստի ժողովուրդը կենդանի խօսք չի լսում. երբ խօսում
ենք և այդ խօսքը մաշում է մեզ, վասն զի նա մեր կոկորդից
չէ սկիզբն առնում, այլ մեր ամբողջ էութիւնից, մեր ամենա-
սուրբ զգացմունքները ծաղրեցին, մեզ կեղծիքի-ֆօկուսի մէջ
ամբաստանեցին. այդպիսի ֆօկուսներ էին անբարեխիղճ մարդ-
կանց աչքում նաև մեր համեստ քարոզները քաղաքիս ս. տա-
ճարներում: Այսպիսի վարմունքին անուն գտնելը այլոց եմ թող-
նում, բայց իմ միտքս է գալիս ս. աւետարանից հետևեալ
կտորները ճշովհաննէսն եկաւ. ոչ ուտում ոչ խմում էր, ասացին

սատանայ կայ սորանում, Մարդու որդին եկաւ ուտում ու խմում է, ասում են մարտաւորները և մեղաւորների բարեկամն է»։ և թէ «որ զհոգին սուրբ հայհոյիցէ մի թողցի նմա»։ և չէ որ մեղոգետրող զգացմունքները մեր հոգին է։ Նոր տարին եկաւ. համայն աշխարհի համար ուրախութեան տօն է. մենք մտածեցինք այդ աւթիւ դպրանոցիս աղքատիկ աշակերտութեանն էլ ուրախացնել մի բանով, ցոյց տալու համար թէ աղքատութեան համար էլ նոր տարի կայ. մանաւանդ որ վեհափառի անուանակոչութեան հանդէսն էլ այդ ժամանակներն էր գալիս, լաւ աւիթ նաև ուրախացնելու երեսաներին հայոց հայրապետի տօնի օրը և ահա այս իմաստով երեսաներին միրգ բաժանեցինք. զրեցին հայհոյեցին թէ չամիշով կուրացնում ենք և հասարակութիւն և աշակերտութիւն... Ինչ կ'լինէր մեր վիճակը եթէ Ջուշայ ժողովրդի և տներում և եկեղեցիներում և դպրոցում և փողոցում ցոյց տուած մեր արժանիքից աւելի յարգանքը մեզ չմխիթարէր. չէ որ մենք կարող էինք լքանիլ, յուսաբեկ լինել և այդ մի քանի փոքրիկ հալածիչները հոգեսպան կ'դառնային։ Եւ դարմանք, ես շհասկացայ թէ ում դէմ են կուռում և ինչո՞ւ. մի խեղճ կրօնաւորի, որ առանց էն էլ ոչ որի պարտական չ'լինելով ինք զինք խեցանօթի նման փշրել է և հայոց ժողովրդի ոտքերու առաջն է նետուել. միթէ քաջութիւն է հայհոյել մէկի, որ չի կարող հայհոյել, որ կամաւոր գերի'մ է, իսկ ժողովրդի համար պատուաւոր գերի։ Չեմ էլ կարողանում նախանձով բացատրել, վասն զի, կ'նախանձեն տաղանդաւոր մարդկանց, մեծերին, իսկ ես մի խեղճ ու աննշան մէկը, մէկը որ գիտէ իւր հոգու խորքում իւր մարդկային տկարութիւնները տեսնել և աւաղել. միթէ կարող եմ նախանձ շարժել... Այո, ես չեմ հասկանում, ես միայն այս եմ հասկանում, որ յանիրաւի հալածում են, յանիրաւի նեղում, աշխարհիս ամենաշնչին արարածներն անգամ մի օգտակար բանի պիտանի լինել կարող են, մինչդեռ այդ մի քանի մարդոց համար ես ոչ մի արժանաւորութիւն չունիմ, այլ մի դժբաղդ արարած եմ, որ միայն վատութեան կաւից եմ ծեփուած։ «Թողեալ լիցին դոցա մեղք իւրեանց» ասելով ես շարունակեմ իմ խօսքս։

Տարուայ մէջ զարնան օրերում երկու անգամ աշակերտական փոքրիկ զբօսանք է կատարուել դէպի քաղաքի մօտակայ բլուրները զաստիարակների, վերակացունների և տեսչի առաջնորդութեամբ. աշակերտական զբօսանքների օգուտը կ'բացատրէի, եթէ յոյս ունենայի թէ կ'արող կ'լինինք կանոնաւոր և օգտակար զբօսանքներ ունենալ, որոնց համար նոյնպէս միջոց պէտք է: Ս. Զատկին ըտլոր աշակերտները խոստովանուել և հաղորդուել են ուսուցիչների հետ մէկտեղ:

Աշակերտների չբաւորութիւնը ինչպէս վերը յիշեցի ամենամեծ արգելքներից մէկն է մտաւոր և բարոյական չառաջադիմութեան. այդ հանգամանքն ի նկատի է ունեցել Յաւերժայիշատակ Մատթէոս Կաթողիկոսը և Գպրանոցներին տուած կանոնադրութեան մէջ սահմանել է որ Գպրանոցներում աղքատ և ընդունակ աշակերտները գիշերօթիկ լինին, սննդուն և ուսանին զգլրանոցի հաշուով: Բայց այդ գաղափարն իրագործուած չէ այստեղ. հոգաբարձութիւնը շատ սուղ միջոցներ ունի ու անկարող է ոչ միայն գիշերօթիկ բաժին բանալ այլ և հանդերձի և ուսման պիտոյքն հոգալ. իսկ ժողովուրդը՝ որ միայն հոգաբարձու ընտրել զիտէ իսկ օգնել նոցա՝ ոչ, մեծատունները՝ որոնց առատութիւնը հայ գպրանոցից դուրս է փայլում, աննշան բացառութեամբ, գուցէ չեն էլ մտածում գիշերօթիկ որդեգրութիւն հաստատելու և աղքատ աշակերտների յառաջադիմութեան գործն ապահովելու: Այդ շարշարանքն էլ ծանրանում է տեսչի վերայ, տեսչի որ պարտաւոր է միայն ուսումնականբարոյական, կրօնական դաստիարակութեան վերայ հակելու: Այս տարի հնարաւորութեան չափով աշխատել ենք աղքատ աշակերտների գոնէ մի մասի հագուստ, օտնաման և ուսման պիտոյքները հոգալ. մենք ոչ ռբի ուղղակի ձեռք մեկնած չենք, այլ միայն ուր կարողացել ենք նկարագրել ենք մեր աշակերտների դրութիւնը առանց եզրակացութեան. եղել են մարդիկ որոնք աղքատ աշակերտների օգաին առանց որ և է պարտաւորեցուցիչ առթի նուէր են տուել, այդ տեսակների թիւը շատ քիչ է. մեծ մասով մեր ունեցած եկամուտը ննջեցեալներից է եղել. այսինքն երբ ննջեցեալի տէրը երգչական խումբ է ուղել,

մենք էլ խնդրել ենք որ աղքատ աշակերտներին շնորհաբար ի յիշատակ հանգուցեալին. ապա խնդրել են որ մեր նուստութիւնը պատարագ անէ կամ դամբանական ասէ, որի համար դարձեալ աղքատ աշակերտներն են օգտուել. նուէրի քանակը կախուած է եղել հանգուցեալի ախրոջ բարի տրամադրութիւնից և կարողութիւնից և մասամբ էլ մեր խօսքի տկար ազդեցութիւնից: Ահա այս միակ ճանապարհով և մնօգնական գանձել ենք հետեւեալ նուէրները հետեւեալ բարեսիրտ անձերից:

| Թիւ նուէրատ. | ԱՆՈՒԱՆՔ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՅ ԵՒ ԱՌԻԹ | Ռ. | Կ. |
|--------------------|---|-----|----|
| 1 | Հոգաբարձու պ. Իսահակ Թաղէոսեան իւր որդեգիր. հագուստի | 100 | — |
| 2 | Պ. Յովհաննէս Քամալեան իւր մօր յիշատակին | 300 | — |
| 3 | Պ. Յակոբ Խաչատրեան իւր մօր յիշատակին | 100 | — |
| 4 | Հոգաբարձու պ. Աղաջան Ժամհարեան նորտարու առթիւ | 25 | — |
| 5 | Պ. Կոստանդին Մելիք-Փաշայեան իւր փեսայ Տիգրան Օհանբէկեանի յիշ. | 25 | — |
| 6 | Տիկին Մարթայ Մնացականեան իւր տօնի առթիւ | 10 | — |
| 7 | Պ. Մարտիրոս Յարութիւնեան իւր գետեր յիշ. | 25 | — |
| 8 | Պ. Կարապետ Կարապետեան իւր եղբօր յիշ. | 10 | — |
| 9 | Պ. Խոսրով Աղաբէկեան իւր աներոջ յիշ. | 10 | — |
| 10 | Պ. Միքայէլ Մարգսեան նոր տարու առթիւ | 10 | — |
| 11 | Պ. պ. Գէորգ և Զալալ Առստամեաններից հօրեղբ. և հօր յիշատ. | 50 | — |
| 12 | Մեր բարձր. նախորդ տ. Տիրայր վարդ. մնացած աղք. աշակերտ. ցր. | 72 | 25 |
| 13 | Գպրանոցիս աշակերտներին բաժ. յիշատակ. աւելցուկ յօգ. աղք. | 101 | 40 |
| Ընդամենն | | 838 | 65 |

Քացի սորանից ունինք ստանալու պ. պ. Իսահան և Անդրէաս Թիւնիրէկեաններից ի յիշատակ իրենց բարեյիշատակ եղբայր

Քարաբէկ Թիւնիրէկեանի 200 ը.: Իսկ տարուայ սկզբում խընդ-
րեցին մեզ պատարագել տիկին Մելիք-Փաշայեանի թաղմանը և
նուիրեցին 100 ը.: Այս հարիւր ըուրլին հոգաբարձութեան
դրամարկըն է մտել: Ահա այն նուիրաբերութիւնները, որոնք
մեր ձեռքն են հասած: Եթէ նուիրաբերողներէց մէկն ու մէկը
մոռացուած է, խոնարհաբար կ'իմդրեմ որ յիշեցնէք ինձ: *) Քաջ
գիտենալով որ հայր սակաւ քացառութեամբ հաշիւ պահանջել
կ'սիրէ, բայց հաշիւ տալ ոչ և թէ՛ շատ անգամ մի քանի ըուր-
լու գնով պատիւներ են արատաւորուում և միւս կողմից բարի
սրտերում տարակոյտներ են ձգում, այդ պատճառով զրամների
ստացման և ծախսման համար հետեւեալ կազմակերպութիւնն եմ
մտցրել, որ երբէք եղած չէ:

Սահմանել եմ մի պաշտօնական յանձնաժողով «աղքատ աշ-
կերտաց խնամատար յանձնաժողով» անունով, որի անգամ ու-
սուցիչներին ընտրել է մանկավարժական ժողովը: Ժողովին նա-
խագահում է դպ. տեսուչը, անդամներն են կրօնուսոյց հ. տէր
Կարապետ Վարդապետեան, պ. պ. Գաբրիէլ Դուլիքեխեան, որ
և գանձապահ, Աղեքսանդր Թարխանեան, որ և վերահսկող ուս-
ման պիտոյից խանութին, Պատուական Քուլմանեան, որ և քարտու-
ղար ժողովի: Քարտուղարը յանձնաժողովի խորհրդածութիւն-
ներն և կատարած գործերն է արձանագրում այն մատենում,
որ կոչուում է «աղքատախնամ յանձնաժողովի արձանագրու-
թիւններ»: պ. գանձապահը վարում է ելից և մտից մատեանը
և պահում է գանձուած դրամը, խանութի հսկիչը ուսումնական
նիւթեր է գնում աշակերտներին ծախելու և աղքատներին բաշ-
խելու: Աշակերտների կարիքների մասին նախ տեղեկութիւններ
են հաւաքում դաստիարակները, որոնք և կարօտեալների ցուցակ
են առաջարկում յանձնաժողովին. վերջինս ստուգութիւններ է
կատարում ցուցակի նկատմամբ և ընտրում է չափազանց աղքատ

*) Վերջերս ստացուեց Թիւնիրէկեանների 200 ը. և պ. Գերասիմ Զահ-
նագարեանից 20 ը. ի յիշատակ նորա հանգուցեալ հօրը. այս դրամներն էլ
պաշտօնապէս յանձնուած է աղքատ աշակերտաց յանձնաժողովի գանձապա-
հին: Ունինք ստանալու պ. Յակոբ Խաչատրեանից էլի 100 ը. իւր մօր
իշատակին:

և ընդունակ աշակերտներին որոնց և սկսում է մատակարարել, ի հարկէ այն չափով, որչափով որ ունեցած միջոցն է ներում: Նախագահն այստեղ գործնական ոչ մի դեր չունի, բացի բարձր հսկողութիւնից: Գրամները բարեգործներն ուղարկում են ուղղակի յանուն տեսչի. վերջինս նոցա պաշտօնական թուղթ է գրում յայտնելով իւր շնորհակալութիւնը և դրամի քանակը. թղթի պատճէնն ի հարկէ մնում է զպրոցի գործերում: Ապա տեսուչը ստացուած դրամը պաշտօնական թղթով յանձնում է յանձնաժողովի գանձապահին մտից մատեան մուծելու: Գանձապահի մօտ կայ ընծայագրերի և ընկալազրերի՝ մի վաւերական մատեան: Կոնդերը ընծայագրերն են կաղմում. գանձապահն ուղարկում է մատեանը նուիրողին որ ինքն իւր ձեռքով գրէ և ստորագրէ թէ որքան փող է տուել աղքատ աշակերտներին, իսկ գանձապահից ստանում է կտրոնը, նորա ստորագրութեամբ թէ որքան դրամ է ստացուել: Բացի այդ հոգաբարձական խորհրդին գրուած տեղեկազրի մէջ կ'մտնեն աղքատների համար գանձուած դրամն ու ծախքը: Պարզ է թէ ոչ մի կերպ դրամ կորզել կարող չէ, իսկ ստուգութեան համար ամէն հնար կայ:

1900 թ. հոկտեմբերի 8-ից մինչև 1901 թ. Յունիսի 4-ը յանձնաժողովն ունեցել է եօթն նիստ և ուրեմն նոյնքան արձանագրութիւն: Ժողովների խորհրդածութեանց նիւթ են եղել հետևեալ խնդիրները, ինչ անենք որ աղքատները խնամուին, ինչպէս որոշել աղքատներին, ինչպէս պահել հաշիւները մանրամասնութեամբ արձանագրական և ելումտից մատեաններում ևն: Սոյն արձանագրութեանց հիման վերայ ծախս է եղած ըստ այսմ.

| Գ ր ա ս ու ր ա ն | Ի ն զ Ե ն Ս Տ Ա Յ Ե Լ | | | | | | | | | Ծանօ- թ ու թ ի ն | | |
|------------------|-----------------------|------|-------|---------|-----------|--------|---------|------------|----------------|---------------------|--------------|--|
| | Քանի աշակերտ. | Բուգ | Տաղատ | Վերսիկ. | Կրկնակօշ. | Սանամ. | Քօշակ | Երբան | Դասական պիտուք | | Ծանօթ ութիւն | Գ Ե Դ |
| Ա Ն. պ. | 13 | 13 | 13 | " | " | 6 | " | " | 14 | " | " | Պատական պիտուքի մէջ մտնում են քանին, |
| Ա գ. պ. | 7 | 6 | 5 | " | " | 3 | " | " | 9 | " | " | մտտիտ, թ'անտք, թ'ուղթ, գրէշ, գրչակորթ, |
| Բ Ն. պ. | 8 | 8 | 8 | " | " | " | " | " | 10 | 1 | " | անտարակներ գանազան տեսակ, սեանին. |
| Բ I գ. | 8 | 8 | 6 | " | " | 2 | " | " | 6 | " | " | |
| Բ II | 5 | 5 | 5 | " | " | 1 | " | " | 5 | " | " | |
| Գ Ն. պ. | 6 | 4 | 4 | " | 3 | 1 | " | " | 3 | " | " | |
| Գ գ. պ. | 6 | 6 | 6 | " | " | 2 | " | " | 6 | " | " | |
| Ա Ն. գ. | 6 | 5 | 6 | " | " | 1 | " | " | 5 | " | " | |
| Ա գ. գ. | 3 | 2 | 3 | " | " | " | " | " | 3 | " | " | |
| Բ գ. | 6 | 6 | 6 | " | " | 1 | " | " | 8 | " | " | |
| Գ գ. | 4 | 2 | 2 | 1 | " | 2 | " | " | 6 | " | " | |
| Դ գ. | 1 | 1 | 1 | " | " | 1 | 2,35 ռ. | " | 1 | " | " | |
| Ե գ. | " | " | " | " | " | " | " | " | " | 1 | " | |
| Ջ գ. | 1 | " | " | " | " | " | 1,45 ռ. | " | " | 1 | " | |
| | 14 | 74 | 66 | 65 | 1 | 3 | 20 | 3 Ն. 80 ռ. | 80 | | 3 | Սոցմից ցատ 6 աշակերտ ստացել են զըր- փեր 40 սուղլու, մի աշակերտ պիտուքի. |

15 մանր տղայոց տապատ և վերնաշապիկը կարել են պ. Մկրտումեանները իրենց հօր յիշատակին: Այս պէտքերի հետ ի միասին ծախսուած է մըգի, տօներին դահլիճի լուսաւորութեան, գահաւորութեան, զարդարանքի, յիշատակարան և հրաւէրների, անդորրազրերի և արձ. մատեանների տպագրութեան, ներկայացման, աշակերտական թատրոնի բեմի, պարգևաբաշխութեան, ընդամէնն 559 ըուրլի 99 կոպէկ: Սոյն ծախքը մուտքից դուրս գալով կ'մնայ առ 1 յունիսի 278 ըուր. 66 կոպ. կանխիկ դրամ գանձապահի մօտ: Սոյն հաշիւը կազմել ենք ժողովի արձանագրական և գանձապահի ելևմտից մատեան-

ներից, ուր ամէն ծախք և մուտ յականէ յանուանէ նշանակուած է և ունին վաւերական փաստաթղթեր: *)

Աշակերտների առողջապահական վիճակը սերտ կապ ունի նոցա տնտեսական, ընտանեկան բարոյական դրութեան և զըւրոցական շէնքի յարմարութեան հետ: Առաջին երկու հանգամանքը, որոց մասին շեշտել ենք իւր տեղում, իսպառ հակառակ են եղել առողջապահական կանոններին. երբորդն էլ շատ նըպաստաւոր չի եղել և ահա ինչու. դպրանոցի շէնքն ընդհանրապէս իւր ձեով, սենեակների դասաւորութեամբ և լոյսով յարմար է, բայց շատ անբարեխիղճ է շինուած. ամբողջ յատակը ձեղքերով հարուստ անկանոն դասաւորած տախտակների մի չաշտ է ներկայացնում. ուստի ցուրտ ու փոշին առատ հոսանքով վեր ու վար են անում. յատակները ներկած չեն, որպէս զի կարելի լինէր մաքուր պահել և փոշու քանակը պակասեցնել. եթէ դպրանոցի բակումը ջուր լինէր, կամ մի երկու ծառայ սւելի, այն ժամանակ թերևս ամէն օր յատակները լուանալով կարելի լինէր առաւել մաքուր պահել. փոշու առաւելութիւնն էլ սաստկանում է այն պատճառով, որ աշակերտների մեծ մասը չստերով է, ուրեմն ցելս է բերում դպրանոց որ չորանալուց յետոյ փոշի է դառնում: Բացի սրանից դպրանոցի պատի վառարաններից և ոչ մէկը անծուխ վառուում կամ տաքանում ու տաքացնում է. պատի վառարաններ ունենալով հանդերձ վառում ենք թիթեղեայ վառարաններ, որոնց արագ տաքանալն ու իսկոյն պողելը վնասակար ազդեցութիւն է գործում տղայոց կազմի վերայ. այս դեռ բոլորը չէ. փոքր ինչ քամի եղած օրերում այնպիսի ծուխ էր բարձրանում դասարաններում, որ ստիպուած էինք լինում վառած վառարանը հանել դուրս ձգել և բաց պատուհաններով ու ծխառատ սենեակում շարունակել ուսմունքը: Այս հանգամանքը պարզ է թէ ոչ միայն երեխաների առողջութեան այլ և յառաջադիմութեան վերայ վատ կազդէր: Դպրանոցիս արտաքնոցներն ոչ պակաս ազդում են տղայոց առ-

*) Դորա վերայ իբրև պահեստի դրամ աւելացել է Թիւնիբէկեանների 200 և ճահնագարեանի 20 ուրլին:

ողջութեան վերայ. դորա արտաքնոցներ չեն իսկապէս, այլ շղիտեմ ինչ և այնքան մօտիկ վարի յարկի դասարաններին, որ գարնանը բացուելուն պէս անկարելի էր լինում Ե. Զ. Դ. դասարաններումը պարապել: Սոցա հետ մէկտեղ վրայ հասաւ տարափոխիկ հիւանդութիւնը: Դպրանոցում մի փոքր սենեակ յատկացրել էինք բուժարանի, ուր դպ. բժիշկ պ. Քալանթարեանը շարաթը երկու անգամ ընդունում էր հիւանդներին, իսկ ծանր հիւանդներին այցելում էր տները: Տարուայ սկզբներում մենք ի դիտութիւն աշակերտաց ծնողների գրով ազդարարեցինք որ մեզ իսկոյն իմաց տան երբ երեխաները պառկեն, որպէս զի հնարաւորութիւն ունենայինք բժշկական օգնութիւն հասցնել, բայց ծնողներն անփոյթ գտնուեցան: Պ. բժշկի տուած տեղեկագրից երևում է որ այս տարի մինչև մայիսի մէկը դարմանել է 296 աշակերտ, որոնք հետեւեալ հիւանդութիւնն են ունեցել:

| հիւանդութ. | Քանի | հիւանդութ. | Քանի | հիւանդութ. | Քանի | հիւանդութ. | Քանի |
|--------------------------|------|-------------------------|------|-------------------------|------|----------------------|------|
| Malaria | 97 | Reumat. art. | 5 | Contusis | 2 | Abstruetio | 1 |
| Reumat. musc. | 12 | ac. | 5 | Anaema | 2 | oidi | 1 |
| Conjunct. cat. | 15 | Cacphalologia | 27 | Ascaris lum. | 2 | Neuralgia | 1 |
| Trachoma | 1 | Angina cat. | 6 | Stomatitis cat. | 2 | Gingivitis | 3 |
| Bronchitis | 73 | Colica inf. | 2 | Laringitis cat. | 2 | Cougelatio | 1 |
| Vitium org. cor. | 3 | Catarrhus inf. | 7 | Otitis eotr. | 4 | Panaricium. | 1 |
| Reumat. chron. | 5 | Rhinitis | 5 | Caries dentis | 1 | Eczema. | 15 |
| | | Furunculosis | 1 | | | | |
| | | | | | | Գումար | 296 |

Դեղերի համար պ. բժշկի ձեռքով ծախսուած է ընդամենն 20 ա. 10 կոպէկ: Աշակերտներից տարափոխիկ հիւանդութեամբ վախճանուել են 4 հոգի:

Այս բոլոր հանգամանքներն, զորս նկարագրեցինք մինչև այժմ ի նկատի ունելով մօտենանք այժմ դպրանոցի ցոյց

սուած յառաջագիմութեանը: Իբրև նոր տեսուչ բնականաբար ես անկարող էի ճանաչել ուսուցիչներից իւրաքանչիւրի ձեռնհասութեան չափը, ուստի և դասերը բաշխելիս առաջնորդուել եմ երկու հանգամանքով՝ նախ թէ ուսուցիչը երբևիցէ այս ինչ կամ այն ինչ առարկան աւանդել է թէ ոչ. երկրորդ ի նկատի եմ ունեցել ուսուցչի խօսքը, որով վստահութիւն է ցուցել որոշ առարկաների աւանդման համար: Դասերը բաշխելուց յետոյ տարուայ ընթացքում ազատ ժամերիս այցելել եմ շարունակ դասերին, առաւելապէս վերին դասարանները կամ դպրանոցի նոր շէնքը, տեսել եմ դասաւանդութեան թերութիւններն ու առաւելութիւնները և իմ նկատողութիւններն արել եմ ուսուցիչներին, որից և աշխատել են օգտուել: Այցելութեանց ժամանակ ես նկատեցի, որ բաշխման մէջ աննշան սխալներ արել եմ, զոր սւղղել կ'կարողանամ յաջորդ տարին: Բաց յայդմանէ առարկաներն աւանդուել են անցեալ տարուայ օրինական ծաւալով ու դասերի քանակով. նկատել եմ որ կը ճատուած են եղել վերի դասարաններում մաթեմատիկական առարկաները, որի պատճառների բացազրութիւնը պարտքիս սահմանից դուրս է: Ուսումնական տարուայ վերջին քառորդին Մանկավարժական ժողովը որոշեց քննութիւն անել բայց ոչ բոլոր առարկաներից և բոլոր դասարաններում, այլ այն առարկաներից, որոնք որևէ դասարանում աւարտուում են և լեզուներից ըննել յանձնաժողովներով, իսկ աւարտական դասարանում բոլոր առարկաներից հրապարակաբար: Քննութիւնից յետոյ մանկավարժական յանձնախմբերը իրենց գիտողութիւնները հաղորդեցին մանկավարժական ժողովին, որով և միանգամայն հաստատուեցաւ իմ դիտողութիւններս տարուայ ընթացքում. վարի դասարաններում շատ լաւ դըրուած էին առարկաները, որոնց մեծ մասը միանգամայն գոհացուցիչ էին. առանձնապէս աչքի ընկան հայոց լեզուն ստորին բաժանմունքներից մինչև Բ. դասարան, ռուսաց լեզուն միջին դասարաններում, կենդանաբանութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, տեսութիւն մատենագրութեան, բնախօսութիւն Ա, Բ, Գ, Դ, դասարաններում: Թոյլ էին լեզուներից վերջին երեք դասարանն.

ըր և այդ ոչ առանց պատճառի: Զ. դասարանի քննութիւններից թոյլ էին հայոց և ռուսաց լեզուից. թուլութեան պատճառը ակնյայտնի, պարզ է, վերը փոքր ինչ բացատրուած: Մնացեալ առարկաները գոհացուցիչ էին և լաւ. առանձնապէս աչքի ընկան ուսումն սուրբ գրոց, հայոց գրականութիւն (որոյ ուսուցիչը թէև երկար ժամանակ հիւանդ էր), հայոց պատմութիւն. ինչ կ'վերաբերի հոգեբանութեան և տրամաբանութեան, ես միայն լռել պարտաւոր եմ:

Եթէ դպրանոցի հանգամանքների հետ համեմատենք տուած արդիւնքն ընդհանրապէս, դժգոհ լինելու ոչինչ չունինք. եթէ կայ մէկը որ անյապ կերպով աւելի արդիւնք էր պահանջում և շատ անգամ հանգամանքները մոռանալով նոյն իսկ հնարաւորութիւնից վեր պահանջներ էր անում շարատանջ հայ վարժապետից, այդ տեսուչն էր: Չնայելով ուսուցչական խմբի անձնուէր աշխատութեանը, մեր պարբերական մամուլի մէջ հանդէս եկան յօդուածներ, որոնք մաքուր անխառն անբարեխղճութեամբ նսեմացնել փորձեցին ուսուցչական խմբի աշխատանքը, սոսհարեցին այս տառապեալ ժողովրդի տառապեալ դպրանոցը. երկու առարկայից թոյլ էր մի դասարան. բայց մի՞թէ երկուսի համար մնացեալ տասն էլ պէտք էր ուրանալ: Նախ ես չեմ հասկանում թէ որքան վայելուչ և արդիւ բան է դպրանոցի համար էն էլ միայն վատը, այդպիսի թշնամանող լեզուով լրագրական էջերում գրել. և երկրորդ աշխարհիս որ դպրոցում թերութիւն չի լինում: Յարձակման կենդրոնը հայոց լեզուն է. նախ պէտք է ասեմ, որ ս'վ փոքր ինչ մանկավարժական գլուխունի, պիտի հասկանայ թէ Ե. Զ. դասարան հասած աշակերտին, եթէ նա թուլութեամբ է այդտեղ հասել, մի տարուայ մէջ իսպառ փոխելը շատ դժուար է. երկրորդ՝ վերցնել մի թոյլ աշակերտի տետրակ, որը առանց կարգալու շտապելով բերել գրել էր սեղանի վերայ ուսուցչի պահանջի համաձայն և նորա սխալների արատը տարածել ամբողջ դպրոցի վերայ, չգիտեմ որքան գեղեցիկ բան է. ի դէպ, այդ տետրակը յանկարծ և հէնց այդ վայրկեանից կորաւ: Այդ յարձակման հետ մէկտեղ ճշմարտասէր մարդը պիտի գրէր նաև որ եղել են հանդիսականներ,

որոնք գլխարկ հանած շնորհակալութիւն են յայտնել աշակերտներից իրենց «փայլուն քննութեանց» համար: Երբորդ մեր այցելուներից և ոչ մէկը հայոց լեզուի հմտութեան մէջ այնքան գերազանց կարող էր լինել, որ Խորենացի հասկանար և դատափետէր ուսուցիչ ու աշակերտ: Ի վերջոյ խորհուրդ են տալիս չփտեմ ում ասելով արձակել ուսուցչին և երկի ուսուցիչներին: Զարմանք. այնպէս են խօսում, ինչպէս կ'խօսեն իրենց փողը, աշխատանքը դպրոցի վերայ առատօրէն թափող բարեգործները, բարոյական մարդը իւր արած բարիքի չափով միայն պահանջ պիտի անէ: Լաւ, դիցուք պ. Գիւլղատեանը ծեր է. պէտք է ինդրել որ հեռանայ. ում էք բերում հայկազան. որտեղից, եթէ միայն ճեմարանից չէ, որ ճեմարանցոցն էլ հալածում են, մի մոռանար նաև որ տարեկան 340 ուրբլի էք տալիս այն հայկազան ծերունուն, որին հազարներու չափով էք անարգում մի թեթև գրչով: Բացի դրանից եթէ պ. Գիւլղատեանին խնդրենք որ նստի և գրականութեամբ պարապի, ինչով պիտի ապրի այն վաստակաւոր հայ գրագէտն ու ուսուցիչը, որ 40 երկար ու ձիգ տարիներ հայոց վարժարաններումն է դեղբերել. հայհոյելուց դատ բարոյական պարտք չէք համարում նորա ծերութիւնն ապահովելու վերայ մտածել. և եթէ ոչ, ո՞ր անմիտ երիտասարդ հայկաբանը կ'գայ այստեղ ծառայելու Գիւլղատի օրինակն ի նկատի ունելով: Բայց այս մասին երկարօրէն խօսելու աւելորդ է. ազնիւ մարդկանց և Աստուծոյ դատաստանին ենք թողնում այս բաները:

2. դասարանի քննութիւնները, շատ աննշան բացառութեամբ պատուելի է իւր բարձր ներկայութեամբ սրբազան առաջնորդը, որ և ուսուցիչներին արժանացրել է իւր գոհութեանը: Մանկավարժական ժողովի որոշմամբ ուսումնական առաջին կիսամեակի վերջը նիւթեր յանձնուեցան 2. դասարանցոց աւարտական չարադրութեան համար. այս էլ նորմուծութիւն է, այն նպատակով որ աշակերտները կարող լինին որևէ գրքից օգտուել, կամ որևէ զիրք ուսումնասիրել: Նիւթերն ընտրուած են եղել մանկավարժական ժողովի վճռով և յանձնուած աշակերտներին ուսուցիչների ձեռքով: Այս ձեռնարկութեան մէջ

ցանկալի նպատակին չհասանք. պատճառներն էլի դպրանոցից դուրս պէտք է որոնել: Քննութիւններից յետոյ մանկավարժական ժողովը փոխադրութեան գործը կարգի բերելով ամբողջ տարուայ մէջ և վերջը դուրս գնացած և արձակուածներն հաշիւը տեսաւ. զոր ամփոփելով դնում եմ այստեղ:

| Ք ա ս ա ռ ն | Թիւ աշակերտ. տար. սկիզբ. | Փ ո խ ա գ ը. | Մնում են | ԱՐՉԱՅՈՒՆԸ, ԵՆ | | | | Դուրս են եկել Մեակ են | Աւարտում են | Վերադարձնելի են 1 սեպտեմբ. ունիք | |
|-------------|--------------------------|--------------|----------|---------------|----------------------|---------------------|-------------|-----------------------|-------------|----------------------------------|-----|
| | | | | Վաղըր պատճ. | Թ. տարին մնալու չմը. | Ծուլութեան և հասակի | Գ ա ռ մ ա թ | | | | |
| 1 Ա Տ. պ. | 57 | 40 | 13 | | 2 | | 2 | 2 | | 53 | |
| 2 Ա Ղ. պ. | 57 | 32 | 22 | 1 | | | 1 | 2 | | 54 | |
| 3 Բ Տ. պ. | 52 | 26 | 19 | 1 | 4 | 1 | 6 | 1 | | 45 | |
| 4 Բ I զ. | 54 | 23 | 25 | | 4 | | 4 | 1 | 1 | 48 | |
| 5 Բ II զ. | 53 | 29 | 16 | 1 | 2 | | 3 | 5 | | 45 | |
| 6 Գ Տ. պ. | 64 | 34 | 20 | 1 | 1 | | 2 | 8 | | 54 | |
| 7 Գ զ. պ. | 65 | 39 | 21 | | 1 | | 1 | 4 | | 60 | |
| 8 Ա Տ. զ. | 39 | 18 | 16 | 1 | 1 | | 2 | 3 | | 34 | |
| 9 Ա զ. զ. | 39 | 16 | 16 | 2 | 3 | | 5 | 1 | 1 | 32 | |
| 10 Բ. զ. | 42 | 16 | 16 | 1 | | | 1 | 2 | | 39 | |
| 11 Գ. զ. | 30 | 11 | 7 | 4 | | 1 | 5 | 2 | | 23 | |
| 12 Գ. զ. | 12 | 7 | 1 | 1 | | | 1 | | | 11 | |
| 13 Ե. զ. | 12 | 6 | 1 | 1 | | | 1 | | | 4 | |
| 14 Զ. զ. | 13 | | | 1 | | | 1 | | 10 | 1 | |
| | 588 | 297 | 193 | 15 | 18 | 2 | 35 | 29 | 4 10—11 | 20 | 509 |

- Աւարտում են՝ Ալէքսանեան Բաղդասար Զուլեցի
- » Առաքելեան Գրիգոր Հորդեցի
- » Բահաթրեան Աղեքսանդր Զուլեցի
- » Բայանդրեան Աշոտ Զուլեցի
- » Գասպարեան Լևոն Զուլեցի
- » Զաքարեան Միքայէլ Նորադիւղցի
- » Միքեանց Հմայեակ Զուլեցի
- » Յովսէփեան Ղևոնդ Ծմակահողցի

Աւարտում են՝ Չահպաղեան Վաղարշակ (Խլի-Վարա.)

Սուլէյմանեան Թէոդորոս Չուշեցի

Ընդհանուր պատկերից երևում է, որ աշակերտների թիւը վերին դասարաններում շատ է նուազում. պատճառը շատ հասկանալի է. որովհետև շատ ծնողներ միայն ցանկանում են, որ իրենց որդիքը վարժ գրել կարդալ իմանան, որ շուտով իրենց օգնութեան հասնեն կամ խանութում կամ արհեստում. ուստի և միջին դասարաններից հանելով տանում են. ոմանք էլ բաւական պատրաստուած տեսնելով իրենց որդոցը հանում տանում են պետական դպրոցներ, ահա թէ ինչո՞ւ է նուազ վերին դասարանների աշակերտաց թիւը: Այս կրկոյթն ընդհանուր է գրեթէ մեր բոլոր դպրանոցներում:

Մանկավարժական ժողովի վճռի համաձայն այո տարուայ իւրաքանչիւր դասարանի լաւագոյն աշակերտները մի մի գիրք ընծայ են ստանում իրենց աշխատասիրութեան և ընտիր վարուց համար ի քաջալերութիւն. իսկ աւարտողներին բաժանուում է մի մի օրինակ աշխարհահռչակ Փարբարի քարոզներ իբրև յիշատակ: Ընծայ են ստանում նաև իրենց ձայնով և եկեղեցասիրութեամբ աչքի ընկնող երգիչներ: Ընծայի գրքերը գնուած են աղքատաց յանձնաժողովի դրամով. 2 օրինակ Գամառ Քաթիպայի «բանաստեղծութիւններ» նուիրել է պ. Քաղբատ Տ. Սահակեանը:

Մեր բոլոր դպրանոցների գրադարաններից ամէնէն աղքատը Արցախի դպրանոցինն է. իսկ եղածն էլ գրեթէ ամբողջապէս ինչպէս ասել եմ, ժամհարեան եղբարց նուէրն է: Գրադարանը մինչև այժմ տեղաւորուած էր դպրանոցի հին շէնքի մի փոքր սենեկում գզգզուած ցուցակներով ու խառիխուռն: Անհրաժեշտ էր տեղափոխել նոր շէնքի մէջ, որի համար յատկացրի մի մեծ, լուսաւոր սենեակ. կազմուեցան շորս գրացուցակներ, երկուսը՝ մայր և երկուսը սխտեմատիքական: Հինգերորդ ցուցակն էլ կազմուեցաւ աղքատ աշակերտների գրքերի համար: Նոր ցուցակների համեմատ նորոգուել են և բոլոր գրքերի համարները: Գրքերի քանակը, տեսակը, ընթերցողների քանակը և ընթերցուած գրքերն են ըստ այսմ.

| ԳՐԱՐԻ ՏՆՏԵՐՆԵՐԸ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՔՅՈՒՊԸ | Նայ. | | Ռուս. | | Որ դասակ. | Բանիտին կարգին | Բանի կարգին | Բանի կարգին | Պրոսթ. Նայ. | Պրոսթ. Ռուս. | Գանի կարգ |
|----------------------------------|------|-------|---------|-------|--------------|-------------------|----------------|----------------|----------------|-----------------|-----------|
| | Նայ. | Ռուս. | Նայ. | Ռուս. | | | | | | | |
| Բովանդակութիւն | | | | | | | | | | | |
| Կրօնական | 189 | 6 | 2. | 11 | 144 | 98 | 13 | 9 | | | |
| Լեզու արանական | 38 | 12 | Ծ. | 12 | 124 | 61 | 10 | 5 | | | |
| Գլխութիւն | 514 | 337 | Փ. | 12 | 172 | 48 | 14 | 4 | | | |
| Պատմութ. կենսագ. ճան. | 104 | 84 | Պ. | 29 | 364 | 95 | 13 | 3 | | | |
| Մատենագր. նախ. | 55 | " | Բ. | 41 | 340 | 210 | 7 | 5 | | | Յ 2 8 1 |
| Բնագիտ. մասնեմ. | 36 | 86 | Ա 5. Պ. | 36 | 280 | " | 8 | " | | | Յ 9 9 8 |
| Փիլիսոփ. մանկավարժ. | 33 | 19 | Ա Պ. Պ. | 37 | 298 | " | 8 | " | | | |
| Մանկական | 245 | 283 | Պ 5. Պ. | 40 | 280 | " | 7 | " | | | |
| Պարզեցակ. հրատ. | 35 | 22 | Պ Պ. Պ. | 51 | 320 | " | 6 | " | | | |
| Եւրոպ. լեզ. | " | 18 | " | " | " | " | " | " | | | |
| Այլախոս | 38 | 38 | " | " | " | " | " | " | | | |
| | 1257 | 906 | 9 | 269 | 2250 | 512 | 86 | 26 | | | |

Գրադարանը բաց է եղել շաբաթական երկու անգամ որոշ ժամերին և երբեմն մեծ դասամիջոցին: Գրքերի մի նշանաւոր մասն անկազմ է մնացել, ի հարկէ դրամի սղութեան պատճառով: Այս տարի նուէր ենք ստացել հետևեալ գրքերն ըստ այսմ.

1. Գերապատիւ առաջնորդ Տ. Գրիգոր սրբազան եպիսկոպոսը նուիրել է երկու օրինակ բուսարանական գեղեցիկ ժողովածու.

2. Մեծ. Ժամհարեան եղբարք 1 օր. լուսատիպ աւետարան, հրատ. Լաղար: ճեմ.

3. Մեծ. տեսուչ Ներսիսեան դպ. 4 օրինակ Համառօտ պատմ. Ներսիսեան դպր. սորանից ուղարկուած էր էլի 96 օրինակ վերին դասարանների աշակերտաց և ուսուցիչներին ու հոգաբարձուներին բաժանելու, որ և կատարուած է.

4. Մեծ. Արշակ Տ. Միքելեան 1 օր. Ուսումն ս. գրոց.

5. Մեծ. Մ. Բէկլարեան 5 օր. Դասագիրք ընդհ. պատմ. [Ժարգ. նիկ. Գարամեան.

6. Մեծ. բժ. Սիմէօն Չահնազարեան 1 օրինակ «Մշակ».

7. Մեծ. բժ. Բուդուղեան 5 օր. իւր «Ո՛վ է յանցաւոր» գրքիցը.

8. Մեծ. բժ. Չահնազարեան 2 օր. Մարդասիրութիւն և աշխատանքի ազնիւ գինուոր Ի. Ա. Վեսելովսկին.

9. Մեծ. բժ. Ս. Չահապիղեան 1 օր. Յիշողութիւններ վարդ. պատերազմ. մասին.

Սոյն գրքերի ստացման համար շնորհակալութեան գրքը գրուած են և յայտնուած թէ գրքերը պաշտօնապէս յանձնուած են գրադարանապետին ցուցակազրկու նսւիրաբերողի անունով:

Միայն պ. բժ. Բուդուղեանին ուղղած մեր [Ժողով]ը ամիսներից յետոյ մեզ վերադարձաւ, ճիշտ հասցէն չենք իմացել. ուղղուած էր Նախիջևան:

Աղքատ աշակերտաց յանձնաժողովը ձեռք է բերել 11 կտոր հայերէն և 27 կտոր ռուսերէն դասագրքեր, որոնք և արձանագրուած են առանձին ցուցակում: *)

*) Վերջերս ստացուեցան 2 օրինակ «Մարիա Ստուարտ» ողբերգութիւն մեծ. պ. Մմբ. Չահապիղե կողմից, 1 օր. Գահնայախան խնդրի շուրջը. արժ. հայր Մեսրոբ քահանայ Մելիանից, 2 օր. Գոկոյեան կտակի պատմութ. պ. Իշխան Զոհրաբեանից:

Գրադարանը գրքերի մեծ կորուստ չի ունեցել, միայն մի քանի մանկական գրքեր հնանալով փշացել են և միջանկ կազմ դարանոցը թողնող աշակերտները տարել են: Այս տեղեկագիրը կազմել եմ գրադարանագետի մեզ ներկայացրած հաշուից:

Փիզիքական կարինէալ ար գրարանոցի հին շէնքումն էր, նոյնպէս տեղափոխուած է նոր շէնքը, կարինէալն յատկացնելու յարմար տեղեակ չունենալով, գործիքները զետեղեցինք իրենց պահարաններով հանդերձ գրադարանում: Կարինէալ կառավարելը մեր առաջարկութեամբ կազմել է նոր ցուցակ, որից դուռում ենք այտեղ հետեւելու համարօտ տեղեկագիրը:

Պործիքներ, մօղէլներ, քարտէզներ

Մեքենական մասից 10 գործիք

Տիեզերագրական 5

Հեղուկներին վերար 17

Լոյսին 37

Ջերմութեան 5

Էլէքտրականութեան 14

Գալվանականութեան 13

Մագնիսականութեան 7

Չայնին 4

Ոյժերին 20

Գազերին 13

Մոզական լապտ 1 հատ 64 պատկ

Բուստրանական գործիք 1 արկղ

Մարդակազմութեան 1 կմախք, 9 մօղէլ, 7 քարտէզ

Գինդանաբանութեան 16 մ, 40

Բուստրանական 28

Գործիքներից շատերը փշացած են, շատերը նորոգելու պէտք ունին, գնելու անհրաժեշտ գործիքներ կան գոնէ 600 ուրբու, բայց այս կարիքների զիմացը փող չկայ: Մ այն մտաբան

Ահա այս է դպրանոցի վիճակը, այս է հանգամանքների այն սև շրջանակը, որի մէջ վիճակուած էր մեզ ծառայել: Այս կարիքների մասին ինչպէս և դպրոցական կեանքի ամէն մի երևոյթի մասին պարտք եմ համարել տեղեկագրել սրբազան առաջնորդին և հոգաբարձական խորհրդին, որոց կարծիքը միշտ յարգել եմ և առիթ չեմ տուել մեր համերաշխութիւնը խախտելու: Գիտամեայ համառօտ տեղեկագրով թերութեանց մասին ծանուցանելով, որպէս զի յաջորդ օտարուայ մէջ առաւել անսայթաք լինի դպրանոցը, խնդրել եմ, որ վաղօրօք տեսչի վերայ մտածեն, վասն զի իմ շնչտած թերութիւնների մի մասը վերացնել կարող է տեսուչը ուսուցչաց խորհրդակցութեամբ. իսկ ես իբր միամեայ տեսուչ դորանով պարտքս կատարած էի համարում: Բայց սրբազան առաջնորդին և մեծարոյ հոգաբարձուացն հաճելի եղաւ վերստին ինձ հրաւիրելու տեսութեան պաշտօնով եռամեայ ժամանակով: Դժուարանալով սկսած գործիցը բաժանուել, հնազանդ մնալով սրբազան տիրոջ կամքին և բուռն յարգանք տածելով առ պատուական հոգաբարձութիւն, որ իմ ջանքերս տեսաւ և դնահատեց, յօժարեցայ մնալ, հակառակ առողջութեանս: Անմիջապէս ձեռնարկեցինք դպրանոցի ծրագիրը վերականգնել, որը երևի ստիպողական հանգամանքների պատճառով փոքր ինչ աղաւաղուած էր. այսպէս օրինակ՝ ի նկատի ունենալով երջանկայիշատակ Տ. Մակար կաթուղիկոսի տուած ծրագիրը թեմական դպրանոցներին, ճեմարանինը և դպրանոցի հինը վերականգնեցինք երկրաշափութեան, հանրահաշուի, տիեզերագրութեան դասերը վերին դասարաններում, ուստի կրճատուած է եղել, կարգ աստուածպաշտութեանը իբրև առանձին ուսմունք վերցրինք, որովհետև կրօնական միւս ուսմունքների հետ անհրաժեշտօրէն պիտի անցնեն ուսուցիչները, ինչպէս և տոմարագիտութիւնը տիեզերագրութեան հետ: Այն առարկաները, որոնց դասերի թիւն աւելի էր քան պէտք էր դասընթացն անցնելու համար մէկով պակօսեց և աւելացաւ այն դասերի վերայ, որոց ընթացքի համար եղածը քիչ էր. եղան նաև տեղափոխութիւն առարկաների, օր. առաջին դասարանի ոյժից վեր եղածները դրուեցան Բ. դասարան ևն: Մաթեմատիկական վերականգնելով մենք մտածեցինք

արժանաւոր ուսուցիչ ճարել, հոգաբարձութեան միաձայն հաւանութեամբ հրաւիրեցի դպրանոցի վարեմի ուսուցիչ պ. Իշխան Զոհրաբեանին. ի նկատի ունենալով որ դպրանոցական օրէնսդրութեամբ մեր դպրանոցի տեսուչները պիտի օգնականներ ունենան և սիրելով ընկերական կառավարութիւնը, ցանկացայ մտցնել տեսչի օգնականութեան պաշտօնը: Հայոց եկեղեցու երգեցողութեան և ժողովրդական երգի ու նուագի սիրահար լինելով, պարտաւոր էինք առաւել ևս բարւոքել այդ բաժինը. երգեցողութեան և ձայնագրութեան դասերի թիւը մի ուսուցչի ոյժից վեր է, ուստի հոգաբարձութեան համաձայնութեամբ մտադիր ենք մի ուսուցիչ հրաւիրել յատկապէս հայկական նօտայի և ժամակարգութեան համար, իսկ խմբական երգեցողութեան համար, եւրօպական նօտայի և երաժշտութեան մի ուրիշ ուսուցիչ, որ ունինք արդէն: Սիրելի էր մեզ տեսնել թէ ո՞ր հարուստը յանձն կառնի դէժ մի 300 ռուբլի նուագածութեան յարաւոր գործիքներ բերել տալու, որ դպրանոցն իւր նուագախումբն ունենայ:

Բացի այս կան այնպիսի կարիքներ, որոնք եթէ այս ամառս չհոգացուին, մեր ծրագիրը կ'քանդուի, մենք ցանկալի նպատակին չենք հասնի և ժողովուրդը էլի ձեռքերը ծալած մեզ կ'մեղադրի: Ահա այդ անհրաժեշտ պէտքերը. դասագրքեր չունինք, օգնեցէք որ դասագրքեր տպենք. մեր խնդրանօք պ. Հայկ Յովհաննիսեանը ընդհանուր աշխարհագրութեան դասագիրք է կազմել, տպագրութեան ծախքն հոգացէք. քարտէզներ չունինք ամենակին, եղածներն իսպառ անպէտք են, ջուր չունինք դպրանոցի բակում, կրկնակօշիկների պահարաններ չունինք որ մաքրութեան վերայ հսկենք և գողութիւնների առիթ չտանք, կարինետում կարևոր գործիքներ չունինք, աշակերտական նօտարաններն անպէտք ու քիչ են, գրատախտակներ պէտք են, դպրանոցի յատակը պէտք է կարգի բերել և ներկել, շէնքն սպիտակացնել, վառարանները նորոգել, արտաքնոցները շինել ևլն: Կարիքներ՝ առանց որոց գործը դժուար է, զի ոչօք կարող չէ ոչնչից ինչ ստեղծել, բացի Աստուած. հասկա հայ բարեգործներ, տեսէք այս կարիքներն ու օգնեցէք հոգաբարձութեան: Փառք

ու պատիւ թիւնիրէկեան եղբարց, որ իրենց եղբօր յիշատակին մի գեղեցիկ գործ են յանձն առել. նորա նորոգում, դարդարում և կահաւորում են դահլիճը, բաց են անում մի դուռն դէպի բակը: Ճարտարապետ պ. Ջանուսեանը շատ բարի եղաւ սիրայօժար պատրաստակամութեամբ կազմել ծրագիր և հսկե նորոգութեանց:

Բայց այս բոլորն էլ եթէ լինին, այնուամենայնիւ մեր դպրանոցը, մեր կեանքը չի բարւոքուի, եթէ անձնական հաշիւներն, ատելութեան մէջ նեղ ոգին մէկ կողմ չ'դնենք և արդարութիւն չ'սիրենք. մեր պատուական ժողովրդի մէջ կան մարդիկ, որոնք սիրում են խռովել և հաւատացէք որ անձնական հաշիւներով. մէկը ընդհարուած է դպրոցում պաշտօն վարող մի անձնաւորութեան հետ, դպրոցի դէմ է քարոզում ու գրգռում, մէկը զրկուել է դպրոցի պաշտօնից կամ փորձել է ունենալ ու չի յաջողուել, դպրոցի դէմ է քարոզում. մէկը հոգաբարձուին հակառակ է, ուզում է որ դպրոցն աղմկուի, որ իւր հակառակորդի վերայ խօսելու առիթ ունենայ կըն. կըն: Եւ այս անձնական հաշիւներն ինչպիսի ճանապարհով են գործում, օրինակներ բերեմ. գալիս տեսչին ասում են թէ այս ինչ ուսուցիչներին դուրս արա, այս ինչ այն ինչ վատութեան տէր են, զնում են նոյն ուսուցիչներին ասում թէ տեսչի դէմ բողոքեցէք շուտով, նա մտադիր է ձեզ դուրս անել: Եթէ խելօք են տեսուչն ու ուսուցիչը՝ կարողանում են հասկանալ խաղը, իսկ եթէ ուսուցիչը վախենում է իւր թերութիւններից, յիրաւի մոռանում է իւր կոչումն ու վատութիւն է գործում: Չատ անվայել միջոցներով ջանացին կուսեցնել հոգաբարձութիւն, առաջնորդ, տեսուչ. բայց սրբազան տէրը և պարոն հոգաբարձուները յենուելով իրենց փորձառութեան վերայ, իրենց պատուին վայել խաղաղութեամբ վարեցին գործը, որով և համերաշխութիւնը անխախտ մնաց: Ի հարկէ իւրաքանչիւրը իւր պարտքը գիտէ, բայց այդ խռովասէր ոգին շատ բան աւրել է և կարէ: Ահա թէ ինչ է պէտք դպրանոցին, խաղաղութիւն, խաղաղութիւն և խաղաղութիւն: Երբ խաղաղութիւն կայ տեական ուսուցչական համեստ խումբը շատ աւելի արդիւնաւոր կ'լինի, քան ամէն տարի փո-

փոխուող ականաւոր խումբը: Խուովութեան երեսէն անարգուելի իզուր տեղն ու գնացել են շատ տեսուչներ ու սուսուցիչներ, վերջապէս կերթամ և ես, կ'գայ ու կերթայ մի ուրիշը և կ'հասցնեն այնտեղը, որ էլ ոչ ոքի գալու կարիք չի լինի. և միթէ այդ կ'լինի արգարութիւն, աղնուութիւն և հայրենասիրութիւն:

Այս է իմ հաշիւը. այդ են իմ ցանկութիւնները: Ես կուզէի որ խաղաղութեան զարունը դար և անանց լինէր մեզ համար, ես կուզէի որ ատելութեան ձմեռը վերջանար և առաքինութեանց ծաղիկները միշտ փթթէին անթաւամբ: Եւ ես, իբրև հայոց եկեղեցու անարժան ծառայ, առաւել ևս հաստատուէի իմ դաւանանքիս մէջ. իսկ իմ և ձեր ամենուղ դաւանանքն այս պիտի լինի. հաւատամք երկնքում երեք բան ի հայր, յՈրդի և ս. Հոգին Աստուած, իսկ երկրիս վերայ էլի երեք բան՝ հաւատամք ի յոյս, ի սէր և ի հաւատ հայ ժողովրդի: *)



*) Այստեղ դնում ենք և հաշուետութեան հանդիսում արտասանուած կրթական ճառը ուսուցիչ պ. Հայկ Յովհաննիսեանցի:

Գերապատիւ տէր,
յարգելի հանդիսականներ եւ սիրելի աշակերտներ.

Եթէ պատահել է ձեզ երբ և իցէ կեանքի առօրեայ հոգ-
տիրից գուրս անձնատուր լինել մտքերի աշխարհին և ձգտել
իմանալու, թէ մըտեղից են գալիս և ո՞ւր են գնում բնութեան
մէջ այս բոլոր իրերն ու երևոյթները, անշուշտ ձեր հարցասէր
միտքը կանգ առած կլինի նաև մարդկային կեանքի վերայ ու
հարցրած կը լինիք. «Ինչ է մարդս և ո՞րն է նորա կեանքի
խորհուրդն ու նպատակը». հարցումներ որոնք նոր չեն, այլ
ամեն ժամանակ եղել են մարդկութեան առաջնակարգ հանճար-
ների մտածողութեան աւարկան:

Անկասկած մարդս արժանի է այդ ուշադրութեան, որով-
հետև նա մի անծանօթ, բայց հետաքրքիր աշխարհ է. մի փոքր,
բայց միևնոյն ժամանակ շատ մեծ ու հրաշալի էակ: Գեղեցիկ
կերպով բնորոշում է նորան հայ բանաստեղծն՝ ասելով. «Մերթ
չիթ մը ցօղ զիս կը թաղէ, մերթ տիեզերքն ալ ինձի նեղ է»:
Արդարև դիտեցէք մարդու մարմնատուր կեանքը. նա ձեզ մի թոյլ
ու անպաշտպան արարած կ'երևայ, որ կարծէք բաղդի բերմամբ
կոշուած է բնութեան արհաւիրքների ձեռքում, իբրև մի թշուառ
խաղալիք, քարշ տալու իւր տանջանքներով լի կեանքը, մինչև
որ մահուան խորշակը կը փչէ ու նրան մի հարուածով մուծ
ու մռայլ գերեզման կիջեցնէ, որտեղ նրա յիշատակն անհետ կը
կորչի ու յաւիտենական մոռացութեան կը մատնուի: Յիրաւի
թշուառ կը լինէր մարդս, եթէ այդ լինէր նորա կեանքի նպա-
տակն ու խորհուրդը:

Բայց դարձրէք ձեր հայեացքը դէպի նորա հոգևոր կեանքը.
ահա՛ն նա, բնութեան գաղտնիքներին թափանցելու տենչով վառ-
ուած, մտքով սլանում ու ճախրում է տիեզերքի անհունութեան

մէջ. մարդկային կեանքի առեղծուածը լուծելու համար, ներկայից անցեալն է տեղափոխուում և նոյն իսկ ապագայի անորոշ սահմանները թեւակոխուում, այն ժամանակ նա ձեռք մի աստուածային ու անմահ էակ է երևում, որ կոչուած է անդադար գէպի վեր ձգտելու: Այդ ձգտումն է, որ նսրան տարբերում է բոյսերից ու կենդանիներից. այդ ձգտման մէջ է նորա իսկական կոչման ու յառաջադիմութեան մեծ գաղտնիքը:

Մարդկային կեանքի այդ ձգտումն, այդ հոգևոր գործունէութիւնը զարբերի ընթացքում արտայայտուել ու արտայայտուում է գեղարուեստի և գիտութիւնների միջոցով, որոնք մարդուց սկիզբն առնելով, ձեռք ձեռքի տուած ներգործում են նոյն մարդու վերայ իրրև ուսմունքներ և նորան առաջնորդում գէպի գեղեցկի, բարւոյ և ճշմարտի ներդաշնակ միութիւնը, դէպի գաղափարականն ու աստուածայինը:

Գեղարուեստը վսեմացնում ու ազնուացնում է մարդու սիրտըն ու զգալ աշխիս այն բարձրութիւնը, որին նա պէտք է ձգտէ, գիտութիւնը ցոյց է տալիս այդ բարձրութեան հասնելու ճանապարհները. գեղարուեստն զգացմունքներն է ղեկավարում, գիտութիւնը՝ խելքն ու բանականութիւնը. իսկ երկուսի համերաշխ ներգործութիւնը մարդու վերայ բարոյապէս, մտաւորապէս և ֆիզիքապէս, կոչուում է դաստիարակող կրթութիւն, որ տարբերուում է այն տեսակ կրթութիւնից, որի նպատակը լսկ կենսական հմտութիւններ հաղորդելն է: Դաստիարակող կրթութիւնն է այն ճանապարհը, որով մարդկութիւնը դէպ անվերջ կատարելութիւն է դիմում. այդ տեսակ կրթութիւնն է այն կրակը, որ վառում է մարդկութեան լաւագոյն գաւակների սրտերն ու բորբոքում նոցա մէջ մարդկային իղէալին մօտենալու անվերջ իղձն ու փափազը. այդ տեսակ կրթութիւնն է այն հոսքը, որ բարոյական ու անյողգող բնաւորութիւններ է կռում, որոնք զինուած առաքինութեան զէնքերով, կեանքի կռուում գլուխները չեն կորցնում, այլ անսասան ժայռի նման դիմադրում են խաւարի և ագիտութեան մանչող ալիքներին և վերջապէս այդ տեսակ կրթութիւնն է մտքի և սրտի, գաղափարների ու զգացմունքների այն աշխարհը, որտեղ մարդկային կոպիտ ու

անկերպարան հոգին կոկոռում, գտուում և աստուածային ձև-
նափայլ կերպարանք է ստանում. այն աշխարհը, որտեղ բոլոր
մարդիկ միութեան ձեռք են մեկնում և նախկին վայրագ ու
զարհուրելի հայեացքները տեղի են տալիս բարեկամական գորո-
վին ու քաղցր ժպիտներին. ոճրագործութիւն ու արեան պաս-
քը՝ դիւցազնական առաքինութեան. իսկ տառապանքներով լի
կեանքը դառնում է մեծ գործերի և գաղափարների ասպարէզ:

Ես չգիտեմ սրն է այն երջանիկ պատմական վայրկեանը,
երբ կրթութեան ու դաստիարակութեան հիմքը դրուեց, բայց
անշուշտ մարդկային կեանքի յառաջադիմութեան առաջին ու
ամենամեծ քայլն է այդ, կրթութիւն, այս մի լոկ խօսք չէ.
Սրբալիսի բարձր ու վսեմ նպատակ, սրբալիսի սուրբ կոչումն և
սրբան քաղցր պտուղներ են կապուած այդ անուան հետ. բայց
և սրբան դառնութիւններ: Սարսափում է մարդ, երբ յետ է
նայում դէպ այն ուղին, որով մարդկութիւնն ընթացել է մինչ
այսօր. սրբալիսի փշոտ ճանապարհ, սրբալիսի խաւար, սրբան
թունաւոր բաժակներ և քանի՜ գիտութեան զոհեր: Յառաջադի-
մական իւրաքանչիւր մի քայլ մեծ զոհաբերութեամբ է եղել,
ինչպէս ասում է Հայնէն. «Այնտեղ, ուր մի մեծ հոգի մարմին
է տալիս իւր մտքին, յառաջ է գալիս միջ նոր Գողգոթա»: Յի-
բաւի, մարդկային յառաջադիմութեան դրօշակակիրներն ու կրթ-
թութեան կարապետները, մարդկութիւնը խաւարի ճանկերից
ազատելու համար, հոսանքի հակառակ լողացին, փուշ ու տա-
տասկ կոխեցին, քարկոծուեցան ու ընկան անհաւասար կռուի
մէջ. մոլեռանդ խաւարը նորանց շհասկացաւ, գուցէ նորա հա-
մար, որ ապագայ սերունդն աւելի պայծառ կերպով տեսնէր
անցեալի խաւարն ու լուսաւորող աստղերի փայլը, նոքա ըն-
կան, բայց մահն անզօր էր նորանց միացնելու և հէնց ընկած
օրից ապրել սկսեցին. նոցա արեան հետքն եղաւ այն շաւիղը,
որով մարդկութիւնը յառաջ դիմեց. նոցա քարոզած գաղափար-
ները, դարեր ապրելով յաղթանակեցին ու ապագայ սերնդի
կեանքի ուղեցոյցն եղան. նոցա կեանքը քաղաքակրթութեան
պատմութեան էջերը զարդարեց, որ արիութեան, հերոսութեան
և պարտաճանաչութեան մի անսպառ աղբիւր է ժամանակակից

դաստիարակող կրթութեան համար: Ամեն ինչ աւերող ժամանակը չկարողացաւ ոչնչացնել նոցա գործերն ու գաղափարները. կարծես դեռ այսօր էլ Սոկրատէս, Պլատոն, Վիրգիլիոս, Հորացիոս, Դանտէ և նման մեծ մարդիկ գերեզմանի խորքից հնչեցնում են իրենց գիւթիչ ձայնը, ոչ միայն այն ազգերի մէջ որոնց համար ապրել ու գործել են, այլ և շատ հեռաւոր ու անծանօթ ազգերի մէջ, որովհետեւ հանճարները հայրենիք չունին. կարծես բնութիւնն ամբողջ տիեզերքի համար է վառում այդ անչէջ լապտերները, որոնք իրենց ծնող ազգի պարծանքը լինելով հանդերձ ընդհանուր մարդկութեան են պատկանում. ընդհանուր մարդկութեան սիրտն է բարախում նոցա կրօնքի տակ, ընդհանուր մարդկութեան յառաջադիմութիւնն է նոցա կեանքի խորհուրդը: Երանի՛ այն ազգին, որ հանճարներ ծնել զիտէ. դորանով նա մարդկային ընկերական շէնքի մէջ իւր քարն է դնում և մեծ անուան արժանանում: Մի ազգի մեծութիւն նորա թուից, ոյժից և հարստութիւնից չէ կախուած, այլ հոգեկան ընդունակութիւններից. ինչ էր մի բուռն Յոյների թիւը՝ համեմատելով Ատրեստանցուց, Մարաց, Պարթևաց և նման աշխարհաստան ազգերի հետ, որոնք իբրև հեղեղ եկան, անցան, փլատակներ և մոխրակոյտեր թողնելով իրենց յետը: Բայց այսօր նորա չ'կան և յաւիտենական բնով քնած են անցեալի գերեզմանի մէջ, որի տապանաքարին կարելի է գրել. «Այսպէս է անցնում փառքն աշխարհիս» արձանագիրը: Իսկ Յոյներն ու նման մեծ ազգեր դեռ կան ու կը մնան և նոցա կեանքի ուսումնասիրութիւնը շատ երկար ժամանակ հանրամարդկային դաստիարակչական ուսմունքների մէջ առաջնակարգ տեղ կը զբաւէ:

Կրթութեան հանրամարդկային նշանակութիւնն իմանալուց յետոյ, կարևոր է պարզել նաև ազգային տեսակէտը. քանի որ իւրաքանչիւր անհատ իւր ծագումով և կեանքով կապուած է մի որ և է ազգի հետ ու կոչուած է ծառայելու նախ՝ յօգուտ նորա բարոյական շահերի և ապա դորա հետ մէկտեղ նաև յօգուտ մարդկութեան: Ուստի յառաջ է գալիս անհրաժեշտութիւն՝ հանրամարդկային կրթութեան հետ զուգընթացաբար տանել նաև ազգայինը, որի նպատակը պէտք է լինի պատրաստել սա-

նին այնպէս, որ կարողանայ օգտակար լինել այն շրջանում, որտեղ ընտրութիւնը նորան դրել է: Ուրեմն՝ ազգային կրթութիւնը դաստիարակուող սերնդի մէջ պէտք է դարձեցնէ ազգային ինքնաճանաչութիւն, անսահման սէր և հետաքրքրութիւն դէպի մայրենի լեզուն, կրօնը, սովորութիւններն ու բարքերը, մի խօսքով՝ դէպ այն ամէնը, որոնք այդ ազգի առանձնայատկութիւններն ու միացուցիչ օգակներն են կազմում:

Սակայն ոչ բոլոր ազգերին վիճակուած է հաւասարապէս յառաջ տանել կրթութեան գործը. ոմանք շատ յառաջ են զնացել, ոմանք յետ են մնացել, իսկ ոմանք դեռ չեն էլ սկսել: Այստեղ ի հարկէ մեծ նշանակութիւն ունին նախ՝ մի ժողովրդի հոգեկան ընդունակութիւնները, ապա նորա բնական, պատմական և քաղաքական հանգամանքները: Ո՛րքան ձեռնառու լինին նորանք, այնքան աւելի ապահովուած է կրթութեան և յառաջագիմութեան գործն ու ընդհակառակն: Այստեղից խնդիր է ծագում, թէ հապա ի՞նչպէս է հայկական կրթութիւն յառաջ եկել, քանի որ Հայի թէ՛ ներկայ և թէ՛ նախորդ դարերի կեանքի մէջ այդ տեսակէտից մխիթարական ոչինչ չ'կայ. ընդհակառակն՝ լքումն. վհատութիւն ու անտարբերութիւն յառաջ բերող պայմաններ, արխուր դէպքերի մի անընդհատ շարք, մի պատմութիւն, որ արցունքով սկսուում է, արիւնով վերջանում և արիւնով սկսուում, արցունքով վերջանում: Եւ ի՞նչպէս չգործանանք, որ այդպիսի դժուար պայմաններում Հայն ապրել և էլի ապրում է, դեռ նորա սիրտը արտփում է ազգային ու հանրամարդկային մեծ զաղափարներով: Այդ բանը մեծ մասամբ նորա հոգեկան ընդունակութիւնների պէտք է վերադրել. որ նա, իր բնատուր քանքարն անպտուղ չթողնելու համար, ստեղծել է գիր, գրականութիւն և իւրաքանչիւր դարի հոգուն համապատասխան դարձցական կեանք:

Հայկական կրթութեան անցեալի մասին երկար խօսելու տեղը չէ, բաւական է յիշել միայն, որ նա էլ ընթացել է նոյն ճանապարհով, որով ընթացել է հանրամարդկային կրթութիւնը մինչև ժԹ դարը, միայն թէ աւելի փոքր շափով: Ես չգիտեմ, թէ ի՞նչ զգաց Հայը ժԵ. և ժԶ. դարերի վերածնութեան ժամանակ, երբ Եւրոպայում գիտութեան և գեղարուեստի ջերմա-

չունչ հողմը դուրս վանեց տպիտութեան ցուրտ մառախուղն ու հազարաւոր խորհողներ ազատուեցան մտաւոր կաշկանդումից, միայն թէ հայկական կրթութեան պատմութեան ամենափառաւոր էջերը ժԹ. դարին են պատկանում, երբ Հայութիւնն առաջին անգամ, Ռուսաց մեծագոր հովանու ներքոյ, փոքր ինչ շունչ քաշելով անագորոյն բաղդի հարուածներից, ցնցուեց դարաւոր թմրութիւնից, թափ աուեց իրենից հնութեան փոշին և կրթութիւնն ու դաստիարակութիւնը, խիստով աւեր թօղիկներին ու նման պատուելիներէ ձեռքից, դարգացման ուղիղ ճանապարհի վերայ դրեց:

Լուսաւորութեան այդ գործին առաջին դարկ առուղները Հայաստանից դուրս դանուած գաղթական հայերն էին, որ վաճառականութեան շնորհիւ հարուստ ու ապահով վիճակ էին ստեղծել իրենց համար Արեւելեան Հնդկաստանում, Ռուսաստանում, Իտալիայում, Հոլլանդիայում և ուրիշ հեռաւոր երկրներում: Նորա մտաւորապէս էլ յետ շմնալու համար դպրոցներ հիմնեցին և մեր ներկայ կրթութեան կարապետներն եղան:

Այդ դպրոցներից յիշատակութեան արժանի են, Մոսկուայի Լազարեան ճեմարանը, Գոստանդնուպօլսի Սկիւտարի ճեմարանը, Կալկաթայի Հայոց Մարգասիրական ճեմարանը, Թիֆլիսի ներսիսեան դպրանոցը, Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանը, Պաղուայի Սամուէլ-Մուրադեան վարժարանը, որ նախ Փարիզ, ապա Վենետիկ փոխադրուեցաւ, Թէոդոսիայի Խարիպեան վարժարանն ու Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցը: Ահա այս բարձրագոյն դպրոցներից դուրս եկան բաղմաթիւ եռանդուն երիտասարդներ, որոնք, հայրենիք վերադառնալով, նպաստեցին մեր արդի գրական և կրթական կեանքի յառաջ գալուն: Վաթսունական թուականներից սկսած մինչև մեր օրերի հասարակական գործիչների մեծագոյն մասը յիշեալ դպրոցների սաներն են: Սոցա գործունէութեան շնորհիւ, ինչպէս ասացի, բուն հայրենիքում ևս սկսեցին հետզհետէ բացուել և կանոնաւորուել թեմական ու եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնք Մատթէոս ու Գէորգ Դ. կաթողիկոսների օրով իրենց մեծ ծաղկման հասան: Վերջինս առանձին ուշադրութիւն դարձրեց մանաւանդ

օրիորդաց կրթութեան վերայ և ամենուրեք բանալ տուեց նաև օրիորդաց դպրոցներ, լաւ հասկանալով կրթութեամբ մօր դերն ընտանեկան դատարարակութեան մէջ, որտեղ պէտք է զարգանայ մանկան սիրան ու լաւ զգացմունքների աղբիւր դառնայ: Եւ ի վերջոյ հիմնեց ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որ հայկական գիտութիւնների միակ բարձրագոյն հիմնարկութիւնն է:

Պարսկա-Հայոց և Տաճկա-Հայոց կրթութեան գործը, թէև միաժամանակ սկսուեց Ռուսա-Հայոցս հետ, բայց աւելի դանդաղ յառաջ գնաց, իսկ վերջին աղէտների ժամանակ այն էլ կանգ առաւ ու նախկին դպրոցների փլատակների վերայ բարձրացան աղքատիկ որբանոցներ, որոնցից շատերի սկզբնաւորութիւնը կապուած է հանգուցեալ Գրիգոր Ջանշեանի մեծ անուան հետ: Տաճկա-Հայոց բարձրագոյն դպրոցներից յիշատակութեան արժանի է Կարնի Սանատարեան վարժարանը:

Մանաւորելով խօսքս Ռուսա-Հայերի ներկայ կեանքի վերայ, պէտք է ասեմ, որ այնտեղ ընտանեկան և հասարակական կրթութիւն ասուած բանը գոյութիւն չունի, դպրոցականն էլ շատ միակողմանի է: Գոցա փոխարէն նիւթապաշտութիւնը, կեղծ քաղաքակրթութիւնն ու աւերիչ նորաձեւութիւնն են իրենց թեկրը տարածել հայկական խեղճ ու աղքատիկ կեանքի վերայ: Ոչ ոք չէ մտածում իւր որդուն լաւ մարդ դարձնել, մինչդեռ ամենքի ձգտումն է հարուստ մարդ դառնալ: Արհամարհուած են այնքան նահատակների արիւնով կանգնած եկեղեցին, կրօնը, լիզուն և այն ամէնը, որոնք աղգային ինքնապահպանութեան միակ նեցուկն ու ապաւէնն են, իսկ դուրս փոխարէն հայրեմաւսիրութիւն հնչիւն անուան տակ շահագործուում է մարդկանց խիղճն ու ազատ կամքը: Ո՞ր ես վշտահար ծերունիդ Խորենացի, վերկաց, վեր կաց գերեզմանիդ խորքից ու կրկին ողբա՛ Հայոց աւելի սարսափելի աւերակները, Հայոց սրտերի փլատակները. փլատակներ, որոնց վերաշինութեան համար մշակներ են պէտք, իսկ մշակներ հտոցները Քեղ է մնացել, ս'յ Լուսոյ խորան, մի քանի քոյրերիդ հետ. Քեղ, որ միայնակ ու արհամարհուած ես մնացել: Ոչ ոք չէ կամենում այսքան ասրիների լուռ հառաչանքներից և անձայն արցունքներիդ վերջ տալ. մինչդեռ ամեն կողմից

անիրաւութեան քարեր են շարտուում հասցէիդ: Ծանր է խաչդ, բայց մի վհատիր, որովհետեւ ճակտիդ բռնորոգ փշեայ պսակը, առաջիդ խնկարկուող տանջանքների զմուռն ու հայերէն խօսող մանուկները Քո մեծ գործունէութեան անսուտ գրաւականներն են:

Մի վհատիր, որովհետեւ շատ անգամ դառն արտասուքի կաթիլների մէջ ուրախութեան ժպիտդ էլ փայլել է, հասունացած որդիքդ տեսնելիս: Եւ ներկայ ըստէն քո այդպիսի խորհրդաւոր ըստէներից մէկն է, երբ մայրական հոգևոր կաթով սնուած մի խումբ երիտասարդներ, աղգային ու հանրամարդկային առաքիլութեանց դրօշակը պարզած, պատրաստ են հետևելու կեանքի որոտալից մարտահրաւէրին և ասպարէզ նետուելու:

Արդ՝ ձեզ եմ ուղղում խօսքս, սիրելի ընթացաւարտներ, ժամը հնչեց և դուք թողնում էք մեր դպրոցական ընտանիքը. թողնում էք այն յարկը, որտեղ անց կացրիք ձեր պատանեկութեան լաւ և վատ, բայց և անհոգ օրերը. թողնում էք այն յարկը, որտեղ առաջին անգամ բացուեցաւ ձեր մայրենի լեզուն, որով խօսել սկսեցիք ազգային՝ ու համաշխարհային մեծ մարդկանց հետ և գրքերի միջոցով, նոցա շրջանը մտնելով, մտքեր փոխանակեցիք: Վերջապէս թողնում էք այն յարկը, որ, ձեզ խելով խաւարի ճանկերից, հայրենի աղքատիկ ծածկի տակից, հոգեպէս վերածնեց. բաց արաւ ձեր հոգու աչքերը, որ տեսնէք, թէ ի՞նչ ազգի դաւակ էք. որ տեսնէք, թէ Հայն էլ ռենի արդեօք ազգային պարծանքի առարկաներ. պատմութիւն, գրականութիւն, յիշատակներ. որ տեսնէք, թէ ի՞նչ կարիքներ ունի նա և զգաք ձեր կոչումը:

Ահա այդ կոչման ձայնն է, որ վշտերի և արեան ծովից հասնում է ձեր ականջին: Այժմ չէք կարող անտարբեր մնալ դէպ այդ ձայնը, որ ձեր Մայր հայրենիքի ձայնն է, ձեր պարտքը յիշեցնող ձայնն է: Գնացէք ցամաքեցնելու նորա արցունքները, գնացէք սպեղանի դնելու նորա վէրքերին:

Մի կանգնէք և մի յուսահատուէք կեանքի և աշխարհի յարուցած խոշընդոտների դէմ. ազնիւ կռիւ մղէք և հաւատացած եղէք, որ ձեր յաղթութիւնը փառք, իսկ պարտութիւնը պատիւ կրբերէ ձեզ սնուցանող մօրը: Ինքնուրոյն մտածեցէք և արի

կղէք այո-ն այո՛ և ոչ-ն ոչ, ասելու, եթէ գիտէք արդարն ու մեղաւորը: Չարի ժամանակաւոր յաղթութիւնը թող չվհասեցնէ ձեզ, որովհետեւ վերջնական յաղթութիւնը՝ բարունն է: Մեծ մարդկանց գործերը միշտ աչքի առաջ ունեցէք և ձեր կեանքն աւելի գործի, քան խօսքի նուիրէք, որովհետեւ գործերը հսկաներ են, խօսքերը գաճաճներ. սրանց գործ կայ, խօսքը լոււմ է:

Պարտքի կատարումն ամեն բանից վեր դասէք, որովհետեւ պարտաճանաչութիւնն ամենամեծ առաքինութիւնն է: Չեք մաքրի լոյսը, հոգո՛ւ յոյսն ու սրտի սէրը մի թողէք, որ թառամին: Միշտ երախտագէտ սրտով յիշէք ձեզ սնուցանող մօրն ու բարի գործերով դափնի պսակ բոլորէք նորա խորշումած ճակատին:

Իսկ ինձ կրմնայ բունն զգայմունքով վերջին անգամ ողջ-երթ մտղթել ձեզ դպրոցական ընտանիքի կողմից և աւելացնել թող ապրի և յարատեւ այն հիմնարկութիւնը, որ ձեզ կրթեց, այն ազգը, որ ձեզ ծնեց: Ապրիք և դուրք: Գնացէք այսուհետեւ լուսաւոր և բարեմիտ մարդկանց թիւն աւելացնելու ազգի մէջ, գործելու յօգուտ հայրենիքի և մարդկութեան, միշտ հետեւիով այն գրօշակին, որի նշանաբանն է. *դէպի վե՛ր, միշտ յառա՛ջ*:

Արտատնուած Չուշու Հոգ. Թեմ. Գարանոցում 1901 թուի Յունիսի 10-ի տարեկան հանդիսի աւթիւ:



